№ 11 (131) XII ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ 1902

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Ոչ, հազար անգամ ոչ. բանաւորները չեն, որ կտում են ժողովուրդների ճակատագիրը. չէնծու, ոճրագործ „դաշինքները“ չեն, որ ընթացք են տալիս պատմական էւօլիւցիային. „խաղաղութեան“ ու „խոհեմութեան“ քարոզները չեն, որ կարող են արգելել ցաւի, տառապանքի մէջ գալարւող „ռայային“ ըմբոստանալ իր դարաւոր հարստահարիչների դէմ, թափել այն արիւնը, բայց ճակատագրական ուղին, որով ընթացել են բոլոր բախտակից ժողովուրդները՝ ստրկութիւնից դէպի ազատութիւն:

Ո՞վ է այն խիզախը, որ վստահանայ պնդել լուրջ պատճառաբանութեամբ, թէ այդ օրէնքը միահեծան չէ, թէ Մակեդոնիան, Հայաստանը, Ալբանիան կարող են լինել մի մի բացառութիւններ, թէ նրանք կարող են մուրալ իրենց ազատութիւնն ու ապահովութիւնը, մուրալ կամ դահճից՝ նրա առջեւ քծնելով ու փորսող տալով, կամ արեւելեան դիպլոմատիայից՝ աղերսանքներով, յիշատակագիրներով:

Ո՞վ է այն խիզախը, հոգով այն թշուառը, մտքով այն ցաւամեալը, որ վստահանայ հրապարակով քար նետել մակեդոնացի կտրիճների վրայ, որոնք սար ու ձոր ընկած, մէկը քանի դէմ՝ կռւում են յանուն սրբազնագոյն մի դատի — դարերով ոտնահարւած, ամենատարրական մարդկային իրաւունքների...

Յեղափոխութեան անհնազանդ ձայները լռում են այլեւս, զայրի լեզուները պապանձւում են եւ եւրոպական ամբողջ մամուլը, չնչին բացառութեամբ, ներբող է կարդում Ցանկօֆներին ու Դելչեւներին:

Ցասումն ընդհանուր է թիւրքական անօրինակ վարչութեան դիմաց եւ անգամ կեղտոտ, վարձկան թերթերը, որոնք մինչեւ օրս „չափաւորութեան“ խրատներ էին կարդում մակեդոնացիներին ու բուլգարներին — այսօր ապստամբութեան կողմն են:

Յեղափոխութիւնը կատակ չի անում: Խմբական ընդհարումների փազը այլեւս անցած է Մակեդոնիայում. այն, ժողովրդական մի շարժում է, որ բռնկել է միաժամանակ երկրի այլեւայլ կէտերում: Դելչեւի պէս բուռն ժողովրդական գործիչները անդուլ աշխատանքով պատրաստել են այդ շարժման հողը եւ այսօր, հանդիսաւոր օրին՝ մակեդոնական գիւղացու հետ ձեռք ձեռքի տւած՝ մղում են ազատութեան կռիւը...

Պարծա՜նք քաջերին:

Ահա մի ամիս է, ինչ մակեդոնացիները յաղթական կերպով յետ են մղում թշնամու գրոհը. մի քանի կէտերում նրանք կարողացան փառաւոր ջարդ տալ Թիւրքաց բանակին: Գաղափարով, ներքին պայծառ իդէալով տոգորւած՝ մակեդոնացի հայրենասէրները առիւծ են կտրել:

Դրութիւնը լուրջ է. այսպիսի օրեր Մակեդոնիան առաջին անգամն է տեսնում: Ըլդըզի կամարիլլան՝ հաւատարիմ իր աւանդական սովորութեան՝ ճգնում է նսեմացնել Եւրոպայի առաջ մակեդոնական կռւի ծաւալը. նա փող է փչում, որ իրենք մակեդոնացիները հեռու են շարժումից, որ խռովարարները Բուլգարիայից են գալիս: Այդ ծանուցումների հետ միաժամանակ սուլթանի կառավարութիւնը տենդային եռանդով կենտրոնացնում է զօրքը ապստամբութեան վայրում եւ առատութեամբ զէնք է բաժանում մահմետականներին... Տարակոյս չկայ, որ Մեծ Ոճրագործը ներվային ծանր ճգնաժամի մէջ է եւ որ անջատւած անկախ Մակեդոնիայի ուրուականը սկսել է արդէն սարսափեցնել նրան:

Ըլդըզը չի սխալւում, անշուշտ Բուլգարիայից ներմուծւած ուժերը մեծ ու ղեկավարող դեր են խաղում ապստամբութեան մէջ: Բայց հէնց այն հանգամանքը, որ Բուլգարիայից ներս արշաւող 10-15 հոգուց բաղկացած խմբերը կարողանում են ոտքի հանել մակեդոնական ամբողջ գիւղերը՝ պարզ ապացոյց է, որ յեղափոխական տրամադրութիւնը իշխող է Մակեդոնիայում, որ խեղճ, լքւած ռայան Թիւրքաց գազանութիւնների դէմ իր ինչքն ու պատիւը պաշտպանելու համար՝ գերագոյն միջոցը զինւած ապստամբութեան մէջն է փնտռում:

Սակայն — աւա՜ղ — աջողութիւնը տեւողական չէ: Ուժը այնքան է, որ կարող է ալեկոծել քաղաքակիրթ աշխարհը, կարող է փոթորկել դիպլոմատների հանգիստը եւ, թերեւս, ազդու միջամտութիւն հրաւիրել: Իսկ եթէ Եւրոպան այս անգամ եւս քար ու ապառաժ մնայ մակեդոնացիների այդ գերագոյն յուսահատութեան հանդէպ՝ Թիւրքիան իր թնդանօթներով ու հարիւր հազարաւոր բանակով կը կարողանայ ջնջութեամբ վերականգնել „խաղաղութիւնը“ նահատակ երկրում: Ազատութեան առաջամարտիկները յետ կը նահանջեն, հրացանների որոտը կը լռէ...

Յետո՞յ...

Մարգարէ չպէտք է լինել գուշակելու համար, որ

դրութիւնը աւելի եւս կը ծանրանայ, որ վտանգը պիտի կրկնապատկէ՝ թէ Թիւրքիայի և թէ միջազգային խաղաղութեան համար: Համիդի կառավարութիւնը շուտ չի մոռանայ մակեդոնացիներից կրած հարւածները և սուլթանական գազանութիւնները չտեսնւած կատաղութեամբ կը պայթեն Մակեդոնիայի վրայ...

Սակայն յեղափոխականների զինադադարը կարճատև կը լինի. անօրինակ ճնշումները նոր փոթորիկներ կը պատճառեն առաջիկայ գարնան և այն ժամանակ դիւրին չի լինի այլևս տիրանալ շարժման...

Այսօր Բուլգարիայում տասնեակ հազարաւոր մակեդոնացիներ են ապաստան գտած. բուլգար զօրքերի մէջ մօտ 300 օֆիցերներ՝ ջերմ համակրող են մակեդոնական կռւին: Բուլգար ժողովուրդը ճանաչում է մակեդոնացիներին իբրև հարազատներ և նրանց դատը՝ իբրև սեփական դատ: Մակեդոնական կոմիտէի երկու հատւածները միանալու վրայ են ընդհանուր ուժերով կռիւը առաջ տանելու համար: Իշխան Ֆերդինանտի կառավարութիւնը պիտի կարողանա՞յ արդեօք միշտ անկարեկից հանդիսատես մնալ թիւրքական յարաճուն գազանութիւններին...

Մակեդոնիան պիտի մնայ ապստամբ, առանց խաբւելու անբովանդակ խոստումներից ու „քննիչ յանձնաժողովներից“: Նա պիտի քայլէ արեան ճանապարհով, մինչև որ ստանայ միջազգային դաշնագրով ներւագործւած իր անձեռնմխելի իրաւունքները:

Դա է միակ նպատակայարմար ճանապարհը, դա է այն ճ ա կ ա տ ա գ ր ա կ ա ն ո ւ ղ ի ն, որով բռնաբարւած ազգերը նւաճել են իրենց ազատութիւնը:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Կովկաս ապաստանած հայ գաղթականների խնդիրը սպասածից աւելի ողբերգական և բարդ բնաւորութիւն ստացաւ: Ներքև տպագրւող մանրամասն թղթակցութիւնը, ստացւած սահմանագլխից, ցոյց է տալիս, թէ որպիսի անելանելի վիճակ պատրաստեց ռուս իշխանութիւնը՝ թիւրքական գազանութիւններից փախուստ տւած հայերի համար: Այդ յուզիչ մանրամասնութիւնները արդէն լոյս տեսան Պարիզի, Վիէննայի և այլ տեղերի մամուլի մէջ, և առաջ բերին, հաւաստւած ենք, խոր վրդովմունք:

Ֆրանսիական մեր բարեկամ հայասէրները, գլուխ ունենալով պ. Ֆրանսիս դը Պրէսանսէին, ինչպէս մեզ տեղեկացնում են հաստատ աղբիւրներից, դիմումն արեցին հանրապետութեան արտաքին գործերի մինիստր պ. Դելկասէին՝ խնդրելով պաշտպան հանդիսանալ անօգնական փախստականներին: Մինիստրը խոստացաւ և արդէն հեռագրել է Թէհրանի ֆրանսիական դեսպանին, միջնորդելու պարսից Շահի առաջ՝ ի նպաստ Պարսկաստան անցնել ցանկացող գաղթականների:

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Անցեալ 1901 թւի հոկտեմբերին, ինչպէս գիտէք, դուրս եկաւ կովկասեան կառավարչապետ իշխան Գօլիցինի շրջաբերականը՝ ուղղած նահանգապետներին, որով պատւիրւում էր յայտնել թիւրքահայ բոլոր փ ա խ ս տ ա կ ա ն ն ե ր ի ն, որ նրանք կամ պէտք է ընդունեն ռուսահպատակութիւն, և կամ անմիջապէս պիտի հեռանան ռուսաց սահմաններից: Հրամանի մէջ ասւած էր, որ ռուսահպատակ գիւղերին հող չէ տրւում, նրանք իրաւունք ունին անշարժ կալւածքներ գնել 20 տարուց յետոյ միայն և պէտք է 1903 թւից ենթարկւեն զինւորագրութեան. իսկ նրանք, որոնք չեն կամենայ հպատակութիւն ընդունել և կը ցանկանան հեռանալ ռուսաց սահմաններից, կըստանան դիւրութիւններ:

Հպատակութիւն ընդունելու պայմանները, ինչպէս տեսնում էք, գրաւիչ չէին. նոյն իսկ եթէ գրաւիչ էլ լինէին, դրանով խնդիրը չէր լուծւում, քանի որ գաղթականները թողել էին հայրենիքում իրենց ընտանիքի մի մասը, ոմանք կին ու զաւակներ, ոմանք ծնողներ, քոյրեր, շատերը իրենց ամբողջ կարողութիւնը, հողերը, որոնցից պէտք է զրկւէին ռուսահպատակութիւն ընդունելով: Տարաբախտաբար վերադառնալ նոյնպէս անհնար էր. նախ որ թիւրքաց կառավարութիւնը չէր թոյլ տալիս, և երկրորդ՝ երկրում տիրում էին նոյն պայմանները, ինչ որ նրանց գաղթելու ժամանակն էր: Այդպիսով գաղթականների համար ստեղծւել էր վերին աստիճանի անելանելի դրութիւն: Ուրիշ հնար չկար. բայց եթէ խնդրել ռուսաց կառավարութեանը, որ թոյլ տրւի նրանց մնալ ռուսաց սահմաններում նոյն անորոշ վիճակի մէջ, մինչև որ իրենց արիւնլւայ հայրենիքի վիճակը կը փոխւի և վերադարձը կը դառնայ հնարաւոր: Այդպէս էլ արին: Բոլոր կողմերի գաղթականները այդ մտքով կազմած խնդիրներով դիմեցին նահանգապետներին: Նոյնանման խնդիր ներկայացրին կառավարչապետին և Թիֆլիսում գտնւած գաղթականները: Մի քանի անգամ գնացին իրենց խնդրի պատասխանը ստանալու, բայց անօգուտ: Չստացան: Երկար ժամանակ պատասխան չստանալով, նրանք կարծեցին, որ իրենց խնդիրը յարգւած է և ամէն մարդ հանգիստ իր գործին գնաց:

Յանկարծ ներկայ թւի օգոստոսի 5-ին, դուրս է գալիս Թիֆլիսի ոստիկանապետի հրամանը, որով պատւիրւում է ոստիկաններին յայտնել հայ փախստականներին, որ նրանք, որոնք մինչև օգոստոսի 10-ը կը լինեն Թիֆլիսում՝ կը հաշւին ռուսահպատակներ և այդպիսիներին պէտք է գրել Թիֆլիս քաղաքի մէշչաններին շարքում: Ժամանակը շատ կարճ էր. նոր դիմումներ անել, նոր խնդիրներ տալ և պատասխանի սպասել՝ չէր կարելի. հարկաւոր էր մի վճռական քայլ: Եւ օգոստոսի 6-ին, երեկոյեան, գաղթականների ներկայացուցիչները իրենց ժողովում, աչքի առաջ ունենալով ռուսահայերի դրութիւնը, հպատակութիւն ընդունելու ծանր պայմանները և դրան հետևող դրութիւնը, միևնոյն ժամանակ հայրենի երկրի վիճակը — որոշեցին դուրս գալ քաղաքից, շարժւել դէպի սահման և թւի մեծութեամբ ճնշում առաջ բերելով թիւրք կառավարութեան վրայ, ստիպել

Նրան ընդունել ամբողջ գաղթականութիւնը և այդպիսով լուծել գաղթականական հարցը։ Պէտք է ասել, շատերն էին համոզւած, որ յաջող հետևանքի չեն հասնի և կը տուժեն՝ զրկւելով իրենց պարապմունքից և սև օրւայ համար հաւաքած մի քանի կոպէկներից։ Բայց և այնպէս որոշեցին այդ քայլը անել, որպէս զի կատարած լինեն իրենց բարոյական պարտքը։

Նոյն ժողովում որոշւեց, որ դուրս եկողների թիւը ամենապակասը պիտի լինի 600։ Այդ նպատակով յանձնւեց ներկայացուցիչներին, որ նրանք դուրս գալ ցանկացողների ցուցակը կազմեն և միւս օրւայ ժողովին ներկայացնեն, որպէս զի ըստ այնմ վերջնական որոշում կայացւի։ Երկրորդ օրւայ ժողովում երևաց, որ ոչ թէ 600, այլ հազարից էլ անցնում է գնալ ցանկացողների թիւը։ Եւ որովհետև գնացողների մեծամասնութիւնը միջոցներից զուրկ էր և չէր կարող իր խնայած կոպէկներով և՛ ճանապարհածախս հոգալ և գուցէ ամիսներով անգործ մնալով՝ ապրել, առաջ եկաւ դրամի հարցը։ Ցոյս ոչ մի տեղից չկար։ Հանգանակութիւն անել չէր կարելի, որովհետև ոչ ոքի մտքով անգամ չէր անցնում, թէ կառավարութիւնը թոյլ կըտայ հանգանակութիւն բաց անել հրապարակով, լրագրութեան միջոցով, իսկ գաղտնօրէն նոյնպէս չէր կարելի, քանի որ դա վտանգաւոր էր։ Ուստի ոչ մի վերջնական որոշում չկայացաւ։ Մի քանի օր տիրում էր տարտամ դրութիւն։ Մի ելք գտնելու համար, գաղթականներից մի քանիսը դիմեցին „Մշակի“ խմբագրութեան և խնդրեցին հանգանակութիւն անել։ Նա խոստացաւ դիմել կառավարութեանը և թոյլտւութիւն խնդրել, և ինչպէս յայտնի է՝ նահանգապետը թոյլ տւեց հանգանակութիւնը։

Բայց նախ քան յայտնի լինելը, որ հանգանակութիւն պէտք է լինի օգոստոս 11-ին, կիրակի երեկոյեան, Թիֆլիսի երկաթուղու կայարանը մի անսովոր տեսարան էր ներկայացնում։ Հաւաքւած էր գաղթականների ահագին քանակութիւն։ Պլատֆորմի վրայ III կարգի դահլիճում, ասեղ գցելու տեղ չկար։ Թիւրքիայի փ ա խ ս տ ա կ ա ն ն ե ր ը վերադառնում էին բոլորն էլ ուրախ, ոգևորւած։ Թիֆլիսի ժողովուրդը զարմացել էր, ոստիկանութիւնը յանկարծակի էր եկել, չգիտէր ինչ անել։ Ահա խփում է երկրորդ զանգը՝ դէպի Կարս սլացող գնացքի։ „Մնաս բարովների“ աղաղակը ականջ էր խլացնում։ Խփում է երրորդը, գնացքը շարժւում է. ոգևորւած „ուռան“ դղրդացնում է կայարանը։ Ոստիկանութիւնը իրար է խառնւում, ինչ անել չգիտէ, կարգադրութիւն չէ ստացել։

Դա առաջին խումբն էր՝ բաղկացած մօտ 300 հոգուց, որ դուրս էր գալիս Թիֆլիսից։ Միւս օրը քաղաքում օրւայ հարցը գաղթականների գնալն էր։ Նոյն օրը երեկոյեան, ինչպէս նախընթաց օրը, կայարանում կրկին նոյն բազմութիւնը, նոյն տեսարանը, նոյն ոգևորութիւնը։ Տեղացիները հետաքրքրւում էին, ոգևորութիւնը աճում էր։ Հետևեալ օրերում երեկոյեանները կայարան էին հաւաքւում ահագին բազմութիւն տեղացիներից՝ տիկիններ, օրիօրդներ և երիտասարդներ և յուզւած ուռաներով ճանապարհ էին դնում իրենց եղբայրներին։ Տեղացի երիտասարդների մէջ երևաց մեծ ոգևորութիւն, սկսւեց հանգանակութիւն։ Գաղթականները վերադառնում էին այնտեղ, ուր հետ կապւած էին այնքան յոյսեր։ Ի՞նչպէս չ'ոգևորւել... Կառավարութիւնը շւարել, յանկարծակի էր եկել, երբեք չէր ուզում հաւատալ, որ գաղթականները յետ կը գնան։ Եւ երբ ոստիկանապետին յայտնեցին մի երկու օր յետոյ, որ մօտ 800 գաղթական արդէն հեռացել են Թիֆլիսից, նա չէր ուզում հաւատալ։ Ի դէպ՝ երբ գաղթականների մէջ ծագեց դրամական հարց, մի խնդիր տւին նահանգապետին, որով խնդրում էին օգնել իրենց այն 40 հազար բուբլուց, որ հաւաքւած է իրենց օգտին և գտնւում է կառավարչապետի մօտ։ Այդ խնդիրը մինչև օրս էլ առանց պատասխանի է մնացել։ Մի խնդիր տւին և Թիֆլիսի ֆրանսիական հիւպատոսին, որով իրենց ֆրանսիական հանրապետութեան հովանաւորութեան տակ դնելով՝ խնդրում էին նրա միջնորդութիւնը և պաշտպանութիւնը հայրենիք վերադառնալու համար։

Ահա և գաղթականները Կարսում։ Կարսի ոստիկանութիւնը, գաղթականներին վագոններից իջնելուն պէս, շրջապատելով՝ տարաւ, բանտարկեց։ Երեք օր շարունակ կանչում էր նրանց ներկայացուցիչներին և հայհոյելով, ապտակելով ստիպում էր ռուսահպատակութիւն ընդունել, սակայն երբ տեսաւ որ չեն ընկճւում՝ արձակեց։

Մինչև ամսի 26-ը ամէն օր երկաթուղին Կարս էր լցնում մեծ խմբերով գաղթականներ։ Այդ ժամանակամիջոցում գործի ելաւ և Թիւրքաց հիւպատոսը։ Համոզւած լինելով որ այդքան մեծ բազմութիւն ներս խուժելով սահմանից՝ ահագին աղմուկ կը հանէ և որովհետև Թիւրքիան մտադիր չէ ընդունելու և կարող է այդ աղմուկից եւրօպական կամ ռուսաց միջամտութիւն առաջ գալ, ամէն հնար գործ դրեց, որ արգելի դէպի սահմանագլուխ գնալը, խոստանալով հեռագրել գաղթականների անունից Կ. Պոլիս, և խնդրել սուլթանից՝ թոյլտւութիւն ներս մտնելու։ Բայց որովհետև գաղթականները համոզւած էին, որ խնդրի պատասխանը մ ե ր ժ ո ւ մ պէտք է լինի և այդպիսի պատասխան ստանալուց յետոյ շատերը կը թուլանան և կը հրաժարւեն դէպի սահման գնալուց, մերժեցին հեռագիր խփելը և օգոստոսի 25-ին, երկուշաբթի օրը, առաջին խումբը 270 հոգի, դուրս եկաւ Կարսից դէպի սահմանագլուխ։ Ճանապարհին իջևանած հայ գիւղերում նրանց ընդունում էին մեծ ոգևորութեամբ, և հայ գիւղացուն յատուկ հիւրասիրութեամբ՝ առատօրէն կերակրելով և պաշար տալով ճանապարհ էին դնում, մաղթելով բարի ճանապարհ։ Մինչև միւս երկուշաբթի, սահմանագլխի Բաշգիւղ, Սթահան, Զիլախլի, Արմտլու, Զուրուկ, Գիւլանթափ և Ղարափունղար հայ գիւղերը բոլորովին լցւեցին գաղթականներով, այլևս ընդունելու տեղ չկար։ Ամէն մի տան միջին թւով չորս մարդ էր ապրում. դրանց անտրտունջ կերակրում էր հիւրասէր բասենցին, իր ունեցածով, որպէս իր ընտանիքի անդամների։ Շէն մնայ բասենցու օջախը։

Որոշւեց, որ չորեքշաբթի առաւօտ բոլոր գիւղերից գաղթականները հաւաքւեն Բաշգիւղ և այդտեղից շարժւեն դէպի Թիւրքաց սահմանը։ Սահմանագլխի գիւղերում՝ հաւաքւածների թիւը հազարից աւելի էր, հաշւելով երեխաներին։ Դէպի սահման գնալու համար ցանկութիւն էին յայտնել և այդ գիւղերում բնակութիւն հաստատած գաղթականները, որոնց թիւը կը հասնէր 1500-ի. այնպէս որ դէպի տաճկաց սահմանը պէտք է գնային մօտ 2600 տղամարդ, կին և երեխայ։ Չմոռանանք յայտնել, որ երբ առաջին խումբը Կարսից ուզեց շարժւել, գաղթականների խնդրով, Կարսի յաջորդը այդ մասին իմաց տւեց նահանգապետին։ Նահանգապետը յայտնել էր, որ ինքը արդէն կարգադրել է, որ ճանապարհին ոչ ոք

իրաւունք չ'ունենայ նրանց արգիլել և նոյն իսկ հարցնել՝ թէ ո՞վքեր են և ո՞ւր են գնում։ Իսկ այն հարցին թէ արդեօք տաճիկները սահմանում չե՞ն կոտորի գաղթականներին, Թիֆլիսի Նահանգապետը պատասխանել էր, որ պլաստունները կ'առաջնորդեն նրանց 2 վերստ դէպի երկրի ներսը։ Նախ քան դէպի սահման շարժուելը, նոյն օրը հարկ համարուեց իմանալ, թէ ռուսաց մաքսատանը ինչ ձևականութիւններ կան կատարելու, որ նախօրօք կատարուեն և միևնոյն ժամանակ հարցնել սահմանագլխի Սթահան գիւղի սահմանապահ զօրքի հրամանատարին, թէ նա ինչ դիւրութիւններ կարող է տալ կառավարչապետի շրջաբերականի համաձայն։ Հրամանատարը այդ հարցին պատասխանեց, որ ոչ միայն չէ կարող դիւրութիւններ տալ, այլև ով որ համարձակի անցնել՝ գնդակահար կը լինի։ Միևնոյն ժամանակ յայտնեց թէ իրենց գնդի հրամանատարից հրահանգ է ստացել հնարաւորութեան չափ խիստ հսկել սահմանը, քանի գաղթականները սահմանագլխի գիւղերումն են։ Լուրը սկզբում կայծակնահար արաւ բոլոր գաղթականներին, բայց յետոյ կարծուեց, որ կարող է թիւրիմացութիւն լինել, որովհետև ոչ ոք չէր ուզում հաւատալ, որ թոյլ տալով այդպիսի մեծ բազմութեան անարգել անցնել ահագին տարածութիւն՝ Թիֆլիսից մինչև սահմանագլուխ, մօտ 400 վերստ, վերջին կէտում կարող են արգիլել նրանց այդքան տմարդի կերպով։ Հէ որ հէնց Թիֆլիսում կարող էին ասել, որ իզուր էք գնում դէպի մահմանը, չպէտք է թոյլ տանք անցնել։ Հէնց այն հիման վրայ, որ Կարսի նահանգապետը ասել էր, թէ արգելքներ եղած դէպքում թող իրեն դիմեն, գաղթականները հեռագրով խնդրեցին Կարսի յաջորդ Կիւրեղ վարդապետին, որ միջնորդէ նահանգապետին՝ սահմանը անցնելու թոյլտուութեան համար։ Երկու օր սպասեցին պատասխանի։ Երրորդ օրը եկաւ գաւառի կառավարիչը Բաշգիւղ (Կաղզուանի շրջան) հաւաքեց գաղթականների ներկայացուցիչներին և յայտնեց նրանց կառավարչապետ իշխան Գօլիցինի հրամանը՝ կամ իսկոյն ընդունել ռուսահպատակութիւն և կամ դատարկել այս գիւղերը և գնալ ուրիշ կողմից անցնելու ճանապարհ գտնել։ Գաղթականների խնդրին՝ թոյլ տալ անցնել, մերժեց։ Մերժեց նոյնպէս միջնորդել կառավարչապետի առաջ, առաջարկելով գաղթականներին ա ն մ ի ջ ա կ ա ն կերպով դիմել։

Միւս օրը գաղթականների կողմից հեռագրով մի խնդիր ուղարկուեց կառավարչապետին, որի մէջ կրկնելով այն պատճառները, որից ստիպուած չեն կարող ռուսահպատակութիւն ընդունել, և յիշեցնելով շրջաբերականի մէջ խոստացուած դիւրութիւնները ռուսաց սահմանը թողնողներին, խնդրում էին հրամայել ում հարկն է, թոյլ տալու ռուսաց սահմանը անցնել և միջնորդել Թիւրքաց բարձրագոյն կառավարութեան առաջ՝ ընդունել գաղթականներին։ Հարս օր անցնելուց յետոյ ստացուեց մի հեռագիր կառավարչապետի դիւանատան դիրեկտորի ստորագրութեամբ, որի մէջ ասուած էր թէ „ձեր հեռագրի պատասխանը կըստանաք Կարսի Նահանգապետից“։

Անցնում է մի քանի օր և ոչ լուր է ստացուում, որ կիրակի օր Նահանգապետը գալու է Բաշգիւղ։ Հաւաքւում են գաղթականների ներկայացուցիչները և սրտատրոփ սպասում են պատասխանի։ Գալիս է Նահանգապետը, հաւաքում է ներկայացուցիչներին և յայտնում, որ կառավարչապետի պատասխանը էլի նոյնն է, ինչ որ առաջուց գաւառի կառավարիչն է ասել, այսինքն կամ իսկոյն պէտք է ռուսահպատակութիւն ընդունէք և կամ դատարկէք սահմանը։ Բոլոր խնդիրներին, աղաչանքներին, պահանջներին պատասխանուեց նոյնը՝ „ինձ այդ է հրամայուած և ես եկել եմ այդ հրամանը իրագործելու“։ Ցուսահատ, համբերութիւնը հատած գաղթականները յայտնեցին Նահանգապետին, որ „թէկուզ դանակը դնէք վզներիս ու կտրելու լինէք և պահանջէք ռուսահպատակութիւն ընդունել, չենք ընդունի, ինչպէս ուզում էք վարուէք հետներս“։ Նահանգապետը գնաց։ Բոլոր գաղթականները որոշեցին էլի սպասել մինչև պատրիարքից պատասխան գալը, որովհետև իմացուեց, որ Կարսի յաջորդը դիմել էր պատրիարքին և խնդրել միջնորդել սուլթանի կառավարութեան առաջ, որ գաղթականներին ներս ընդունի։

Գաղթականների սահմանագլխի գիւղերը գալու հէնց առաջին օրից, համարեա ամէն օր Թիւրքաց սահմանագլխի Ղարաքիլիսա գիւղի սահմանապահ զօրքի հրամանատարները գալիս էին Սթահան գիւղը, որտեղ նոյնպէս կային գաղթականներ և հետաքրքրւում էին նրանց դրութեամբ։ Դրանցից մէկը, Խալիլ էֆէնտին, մի քանի անգամ կանչեց ներկայացուցիչներին և խօսեցրեց։ Նա ասում էր, որ իրենք պաշտօնապէս դիմել են արդէն ուր հարկն է գաղթականների գալու մասին և պատասխանի են սպասում։

Անցաւ մի շաբաթ ևս։ Լուրեր էին պտտում, որ մարդկանց պէտք է ձերբակալեն, որպէս պ ր օ պ ա գ ա ն դ ի ս տ ն ե ր։ Յետոյ մասնաւոր և ամենաճիշդ աղբիւրից տեղեկութիւն տրուեց, որ Բասենի պօլիցիական մասի կառավարչին հրամայուած է իսկոյն ուժով հեռացնել գաղթականներին այդ գիւղերից, մի մասը դէպի Արտահան, միւս մասը Կարս, և այդ տեղերի վրայ հպատակ գրել։ Հորեքշաբթի օրը եկաւ Կարսի յաջորդը Բաշգիւղ։ Նրա գալուց մի երկու ժամ յետոյ, լուր եկաւ, որ գաւառապետը Ղարափունղար եղող գաղթականներից 35 հոգի բռնութեամբ չ ա փ ա ր ն ե ր ի հսկողութեան տակ տարաւ դէպի Կարս։ Կիւրեղ վարդապետը հաւաքելով գաղթականներին՝ կաթողիկոսի կողմից, յորդորեց կամ ռուսահպատակութիւն ընդունել և կամ փոքրիկ խմբերով անցնել Պարսկաստանի վրայով Թիւրքիա։ Պարսկաստանի վրայով անցնելու խորհուրդը կառավարչապետի օգնական Գրէզէն էր տուել կաթողիկոսին, վերջինիս Թիֆլիս եղած ժամանակ, ուր գնացել էր յատկապէս գաղթականների համար։ Գաղթականները ընդունեցին վերջին խորհուրդը, թէև արդէն յոյսերը կտրել էին, որ ռուսաց կառավարութիւնը իր նահմաններից դուրս թողնի։ Բայց ընդունեցին այդ որոշումը, որպէս զի մի վերջին փորձ անեն, մանաւանդ որ Գրէզէին պաշտօնական անձի խորհուրդն էր։ Միւս օրը Բաշգիւղից դուրս եկաւ առաջին խումբը, 120 հոգուց բաղկացած՝ նախապէս որոշուած որ բոլորը կը հասնէին Էջմիածին, և այն տեղից անկասելի կերպով կանցնին դէպի Պարսկաստան, փոքրիկ խմբերով։ Ուրբաթ օրը դուրս եկան Բասենից, և Կաղզուանի, Կողբի ոստիկանների վրայով հորեքշաբթի երեկոյեան հասան Էջմիածին։

Միւս օրը դեռ չլուսացած տեղական ոստիկանութիւնը գաղթականներին տներից հանեց և հաւաքեց ոստիկանատուն (տեղաւորուել էին գիւղում՝ հաւաքուած փողերով վարձած տներում)։ Այդտեղ բոլորի անունները

արձանագրեցին, երկուսին վերցրին իբրև ե ր ա շ խ ա ւ ո ր, որ ոչ ոք չհամարձակւի գիւղից հեռանալ մինչև Երևանի նահանգապետից կարգադրութիւն լինելը։ Միւս օրը եկաւ կարգադրութիւն, այն է՝ չ ա փ ա ր ն ե ր ի հսկողութեան տակ վերադարձնել բոլորին Կարս, մինչոյն եկած ճանապարհով, այսինքն Իգդիր, Կողբ, Կաղզուան, Կարս։ Գաղթականների խնդրի համաձայն կաթողիկոսը մարդ ուղարկեց Երևան՝ միջնորդելու նահանգապետին, որ փոխանակ ահագին պտոյտ անել տալու ոտով և տանջելու առանց այն էլ յոգնած, թշւառ մարդկանց, Կարս հասցնելու համար՝ թոյլ տան նրանց գնալ երկաթուղով, իհարկէ ոչ-կառավարական հաշւով։ Այդ էլ մերժւեց։ Ուղարկեցին է տ ա պ ո վ։

Իսկ Բասէնում մնացած մօտ 900 հոգի առաջին խմբի դուրս գնալուց 5 օր ուշ դուրս եկաւ։ Կաղզուանում, երբ արդէն պատրաստ են եղել ճամբորդելու, նրանց շրջապատում են կօզակներով և բերում Կարս։ Կարս մտնելը մի սրտաճմլիկ տեսարան էր՝ մօտ 900 հոգի կանանցով ու երեխաներով՝ որջապատւած ձիաւոր կօզակներով, քաղցած, յոգնած առաջնորդւեցին դէպի զօրանոցը և բանտարկւեցին։ Այդ տեսարանից զգացւեցին Կարսի նոյնիսկ ամենաքարասիրտ բնակիչները։ Բայց ի՞նչ կարող էին անել, ո՞վ կը համարձակւէր մի ոևէ օգնութեան ձեռք կարկառել։ Երկրորդ օրը նոյն խաղը։ „Պէտք է ռուսահպատակութիւն ընդունէք“։ Էլի մերժում։ Տալիս են մի քանիներին տպւած տոմսակներ, ասելով, որ դուք արդէն ռուսահպատակներ էք. գաղթականները տոմսակները շպրտում էին երեսներին։ Այդ էլ չէ յաջողւում։ Այդ տեսակ փորձերից յետոյ նրանց ազատ են թողնում։ Քաղաքում ոչ ոքի չէ թոյլ տրւում օգնել նրանց, որ սովամահ լինեն։ Զեն թոյլ տալիս աշխատելու՝ պահանջելով անցագիր։ Դրանց մի մասը այժմ Թիֆլիս է, բայց լուր է տարածւել, որ պէտք է է թ ա պ ո վ տանեն, թէ ո՞ւր, դեռ յայտնի չէ։

ՊՐԷՍԱՆՍԷԻ ԴԻՄՈՒՄԸ

(Տպագրւած „Օրօրի“ մէջ նոյեմբեր 21-ին)

—

Հայաստանի վեհոգի բարեկամներէն մին — կը գրէ Ֆրանսիս դը Պրէսանսէ գաղթականների առթիւ — որ կ'ուզէ ծածկանուն մնալ, վերջերս ղրկած է ինձ հինգ հազար ֆրանքի մի գումար, զոր կը յատկացնէ իր դժբախտ հայրենակիցներուն մէկ մասին օգնութեանը։ Անոնք, որոնք կը հետևին այս դժբախտ երկրի գործերուն, զոր եւրոպական դիւանագիտութիւնը թողած է Աբդիւլ Համիդի քմահաճոյքին, գիտեն թէ ամբողջ շրջանի մը բնակչութիւնը, սպառելով իր համբերութիւնը քիւրդերու, համիդիէներու և նոյնիսկ կանոնաւոր զինուորներու բաղմատեսակ գրգռումներէն ու եղեռնագործութիւններէն և նենգամիտ դահիճի մը հալածանքէն, որ չներեր այդ զոհերուն իր անոնց ըրած չարիքը—որոշած է թողցուլ հայրենի հողը և երթալ ապաստան խնդրել աւելի հիւրընկալ երկրէ մը։

Սրտի ուրախութեամբ չէ որ այս գիւղացիներ, որոնք իրենց հոգիին բոլոր թելերովը կապւած են այն հողին, ուր ծնած են իրենք, ուր ճանչցած ու ճաշակած են մարդկային կեանքի ուրախութիւններն ու վշտերը, ուր դրած են անոնք իրենց զաւակաց օրօրոցներն իրենց հայրերու շիրիմներուն կողքին, կ'որոշեն քանդել իրենց հայրենի օջախը և երթալ օտարութեան մէջ փորձել պանդխտութիւնը, որ միշտ անստոյգ է և երբեմն ալ չարաշուք։ Միշտ դարանամուտ բռնակալութեան մը յամր ու անգութ գործը, արևմուտքի խղճին այս խոր լռութեան մէջ, որ տիրած է պետութիւններուն ներդաշնակութեան այս արգահատելի վիճումին յետոյ, յուսահատութեան մատնած է այս գիւղացիները...

Այն ազնիւ անձինքը, որոնք ոևէ մի յուզում և գութ ունեցած են հայկական ջարդերուն ի տես և որոնք կը կարծեն — որովհետև արիւնը չհոսիր այլևս ուղխօրէն, որովհետև ջարդերը չեն կատարւիր այլևս մեծ քանակութեամբ, որովհետև ամբողջ ազգի մը կոծերուն արձագանգը հարիւրապատկւած չհասնիր այլևս իրենց մամլոյ միջոցաւ—թէ ամէն ինչ լաւ կ'երթայ Տաճկաստանի մէջ. այդ անձինք լաւ պիտի ընէին, եթէ քիչ մը ուշադրութիւն դարձնէին ժողովրդի մը այս գաղթականութեան։ Երբ ժամանակակից դիւանագիտութեան պատմութիւնը գրւի, այն ատեն իր գլուխներուն ամենէն փառաւորը չպիտի լինի անշուշտ ան, որ պիտի պատմէ այս գայթակղալից տեսարաններուն հանդէպ պետութիւններուն ցոյց տւած տարօրինակ անշարժութիւնն և իրենցմէ մէկ քանիին անպատւաբեր փութկոտութիւնը՝ իրենց դէպի մարդկութիւնն ունեցած պարտականութիւնն դաւաճանելու և հրաժարելու նոյնիսկ իրենց պայմանագրեալ իրաւունքներէն՝ վիճելու համար իրար հետ արիւնկզակ բռնակալի մը կասկածելի շնորհները և անստոյգ թոյլտւութիւնները։

Այդ պետութիւններէն նոյնիսկ անոնք, որոնք ինչպէս Ֆրանսան, ճնշւած Հայաստանի խնդիրը չեն լքած բոլորովին և ժամանակ առ ժամանակ լսելի ըրած են իրենց ձայնը Պօլսոյ մէջ ի նպաստ իրենց պաշտպանեալներուն՝ դժբախտաբար հրաժարած են իրենց գործունէութեան իրաւաբանական հողէն։ Անոնք գոհացած են, ամէն անգամ որ զոհերուն աղաղակը չափազանց խլացուցիչ էր և կամ լուսոյ ոևէ ճառագայթ լուսաւորած էր չափազանց գայթակղալիր եղեռնագործութիւն մը, յանուն մարդասիրութեան անոնց դատը պաշտպանել միշտ անբաւարար կերպով և ընդհանրապէս խարուսիկ հատուցում մը պահանջելով։

Պէտք էր և պէտք է ուղղել անյապաղ և անաչառ մի կտրուկ յայտարարութիւն սրկ.թանին, որպէս զի նա կատարէ այն պարտականութիւնը, որու վրայ կը հանգչի Բերլինի համաժողովէն յետոյ իր միջազգային գոյութիւնն և մասնաւորապէս որպէս զի գործադրէ վերջապէս առանց վնասելու միւս պայմաններուն, որոնք կը վերաբերին Մակեդոնիոյ և կամ իր կայսրութեան ուրիշ մասերուն՝ 1878-ի դաշնագրութեան 61-րդ յօդւածը։ Քաղաքական և միևնոյն ժամանակ բարոյական ոչ մարդկային եղած պիտի՞ լիներ, եթէ ֆրանսական նաւաբաժինը չգրաւէր Միտիլինի նաւահանգիստը միայն արևելեան քանի մը անյագ շահագէտներու ի նպաստ և եթէ նա ուղղէր իր թնդանօթները սուլթանի բերդերուն վրայ, ոչ միայն իբրև վկայ ծառայելու Թիւպինիի ու Լօրանդօյի, այլ նաև հանդիսանար իբրև քաղաքակիրթ աշխարհի խղճին և Եւրոպայի հասարակաց օրէնքին նախանձախնդիր։

Անհնար կարծւած է ընել այդ բանը. ողբալի է. այժմ գոնէ պէտք է որ, քանի որ անոնք, որոնք կրնային խօսել վանուն օրինաց և դաշնագրութիւններու, կամովին դրած

են զերենք մարդասիրութեան աւելի նեղ և նուազ հաստատուն հողին վրայ, երթան այս ուղիին մինչև ծայրը։ Որպէս զի առիթ տամ պ. Դելկասէին վճարելու հայերուն փոքր մի մասնավճարն այն պարտքին, որու համար դիւանագիտութիւնը յանձնառու եղած է իրենց նկատմամբ, պատիւ ունեցայ ուղղելու անոր հետևեալ նամակը, նախ քան իմ ստացած գումարիս անոր յանձնումը.

19 նոյեմբեր 1902, Փարիզ

Պարոն Նախարար եւ սիրելի պաշտօնակից,

Այս տեսակցութիւններու միջոցին, զորս ես ձեզ հետ ունենալու պատիւն ունեցած եմ, ձեր ուշադրութիւնը հրաւիրած եմ, այլեւայլ պարագաներու տակ, համաձայն իմ պաշտօնակիցներէս շատերուն հետ, որոնք կը պատկանին ամէն կուսակցութեան, այն ողորմելի դրութեան վրայ, որ կը շարունակէ տարաբախտ Հայաստանի մէջ։ Կարելի պիտի լինէր կարծել, հակառակ եւրոպական ներդաշնակութեան կրած տխուր հարուածին այն կէտին մէջ, որ կապ ունի Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածին գործադրութեան եւ իրականացման այն բարենորոգումներուն, որոնք հանդիսաւորապէս խոստացուած են Եւրոպային 1878-ին, որ այս ժողովրդին մարտիրոսութեան նկատառութիւնը միայն պիտի բաւէր ապահովելու անոր, թիւրք կայսրութեան մէջ, եթէ ոչ մի ապահովութիւն՝ անհնարին օրինական երաշխաւորութիւններով վաւերացուած՝ գոնէ մի ժամանակաւոր մեղմացում իր անտանելի վիճակին։

Դուք ինձմէ աւելի լաւ գիտէք, պ. Նախարար, որ այդ մասին ոչինչ եղած է։ Ֆրանսան եւ անոր հետ այն պետութիւնները, որոնք չեն հրաժարած, գուցէ աւելի սուր շահերու համար, իրենց իրաւունքներու պահանջումէն եւ իրենց պարտականութեան կատարումէն, միշտ սկզբնական կերպով ձեռնարկներ ըրած են ստանալու համար փոխարինութիւն եւ ըստ կարելւոյն հայերու կեանքին, ստացուածքներուն ու ազատութեան դէմ ուղղուած նոր եղեռնագործութիւններուն առաջքն առնելու համար։

Որչափ ալ գովելի լինի Բերլինի դաշնագրութիւնն ստորագրող պետութեանց մարդասէր գործը, նա չպիտի կրնար եւ չէ ալ կրցած պտուղ բերել։ Անհերքելի դրութիւնը, որուն տակ կը հեծեն միշտ այս ազգաբնակութիւնները, երթալով կը ծանրանայ։ Ամենամեծ անհանգստութիւնները կը տիրեն քանի մը գաւառներու համար, ուր քիւրդերը, համիդիէներն եւ նոյնիսկ սուլթանի կանոնաւոր զօրագնդերը կըսպառնան բնակիչներու կեանքին, անոնց կիներուն ու աղջիկներուն պատւին եւ խղճի ազատութեան ժողովրդի մը, որու կրօնքն ու ազգութիւնը դեռ խառնուած են իրարու, ինչպէս արեւելքի երկիրներուն մեծագոյն մասին մէջ։

Այս ժամուս կազմակերպուած բարբարոսութեան մը զոհերէն քանի մը հազարներ կը ջանան խոյս տալ մի անտանելի դրութենէ լքանելով իրենց հայրենի օջախը, երթալ փնտռելու համար ապաստան ուրիշ հողի մը վրայ։

Զանազան նկատումներով, զորս չեմ ուզեր հոս գնահատել, Ռուսիան, թւի թէ, չուզեր ընդունիլ այս նոր հիւրերը։

Հայկական խնդրոյն անձնուէր բարեկամներ խորհած են, թէ այս տարաբախտները թերեւս Պարսկաստանի մէջ գտնեն այն տարրական երաշխաւորութիւնները, որոնց միայն կը ցանկան։

Խնդիր է դիւրացնել այս գաղթականութիւնը. անդիք ունիմ կարծելու, պ. Նախարար, որ դուք տրամադիր պիտի լինիք վեհափառ Շահին քով բարեացակամ կերպով յանձնարարելու զանոնք եւ այս կերպով օգնելու խնդրոյ մը լուծման, որ առանց իրերու խորը շօշափելու քանի մը հազար կեանքեր ազատելու առաւելութիւնն ունի։

Հայաստանի վեհոգի բարեկամ մը, որ կը փափագի անանուն մնալ, ուզած է այս ծրագրին նկատմամբ համակրանքի արդիւնաւոր եւ ազդու ապացոյց մը տալ։ Նա ինձ յանձնած է հինգ հազար (5,000) ֆրանք, պարտք դնելով իմ վրայ հարցնելու ձեզ, թէ դուք պատշաճ չպիտի համարէք այս գումարն հասցնելու տեղւոյն վրայ գտնուած ձեր գործակալներուն, տալով անոնց հրահանգներ օգնելու համար այս գաղթականութեան։

Այն պարագային, երբ դուք հաւանիք—ինչպէս ես կը յուսամ—կատարել մի զուտ մարդասիրական առաքելութիւն, որու գործադրութիւնը կ՚օգնէ միայն Ֆրանսայի արեւելքում ունեցած ազդեցութեան պահպանման, չեմ կասկածիր որ անանուն նուիրատուի օրինակին չհետեւեն եւ ուրիշներ եւ որ հանգամանքները չգան վկայել արդիւնաւորապէս եւրոպական դիւանագիտութեան անկարողութեան այս զոհերուն՝ արեւմուտքի բարեացակամութիւնը։

Չեմ ուզեր նախատեսել բացասական պատասխանի մը պատահականութիւնը եւ ես կը խնդրեմ ձեզ, պ. Նախարար, ընդունելու իմ մեծ համարմունքիս հաւաստիքը։

ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԷՍԱՆՍԷ
Պատգամաւոր Ռօնի
Անդամ Ֆրանսայի հայկական կոմիտէի

Ինչպէս ըսի պ. Դելկասէին, անկարելի կը թւի ինձ որ հանրապետութեան կառավարութիւնը մերժէ կատարելու մարդասիրական մի առաքելութիւն, որու նոյնիսկ դիւանագիտական անտեղի կողմերը չեմ կրնար նշմարել ես։ Եթէ պատահաբար յուսախաբ լինիմ, ինձ կը մնայ փնտռել, անանունին փափագին համաձայն, այս հինգ հազար ֆրանքին լաւագոյն գործածութիւնը, ի նպաստ Հայաստանի, և ինձ սիրելի է հաւատալ որ Aurore-ի ընթերցողներն և ամէն անոնք, առանց կուսակցութեան խտրութեան, որոնք ունէ համակրանք կը տածեն մի նուիրական գործի համար, պատիւ պիտի համարեն գործակցելու ազատութեան և փրկութեան գործի մը։

ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԷՍԱՆՍԷ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԷՆ

7 Հոկտեմբեր 1902

Տաճկաստանում հայի վերաբերմամբ արդարութիւն ասուած հասկացողութիւնը գոյութիւն չունի. իրաւունքի ճնշումն, պատուի բռնաբարում. . .

Հասան-Ղալա կոչուած նախկին բերդի մօտով անցնողի աչքին է զարնում մի խոշոր շէնք, սրբատաշ քարերով ու եւրոպական ձեւով։ Դա Հիւքիւմաթն է (գատաստանական հիմնարկութիւն), որ իր վէթխարի արտաքինով կարծես թագաւորում է շրջակայքի նեղ ու ցածրիկ շէնքերի վրայ։

Չարքաշ հայ գիւղացին, ամառային սոսկալի աշխատանքից տուն է վերադառնում, ուզում է մի կտոր չոր հաց ուտել, պառկել, որպէս զի վաղն էլ շարունակէ նախկին օրուայ ծանր աշխատանքը — և ահա գզիրը կտուրներին կանգնած իր չարագուշակ ձայնով խռովում է նրա հանգստեան ժամերը, սրտապատառ անում խեղճ աշխատաւորին։ Հիւքիւմաթի հրամանն է. վաղը բերդը պիտի երթան, հարկերը պիտի վճարեն, քառասուն սայլ պիտի տանեն, 60 բանուոր պիտի տան ևլն։ Խեղճերը շարունակ աշխատում, քրտինք են թափում, իրենց դառն քրտինքով ապրուստ են ճարում — սակայն մնում են յարատև մերկ, յարատև քաղցած ու ծարաւ։

Գիւղական առաւօտ է. արեւը դեռ չի ծագել։ Դէպի բերդը տանող ճանապարհի վրայ շարժւում են սայլերը, մարդիկ գլուխները կախ, տխուր տրտում հետեւում են

իրար։ Ամբողջ օրը բանում են նրանք՝ տանջւում, մաշւում և գիշերները փոխանակ վարձատրութիւն ստանալու՝ բանտերն են լցւում, որպէս զի չփախչեն։ Եւ այդ գործողութիւնը շարունակւում է այնքան, մինչև շէնքը կը վերջանայ, մինչև հրամանատարի սիրտը քիչ գութ կ՚ընկնի։

Հասան-Ղալայի մօտ գտնւող Հեգերաթ, Հերթև, Երդաբագ և Բադիժան գիւղերի հայերը 5-6 ամիս շարունակ տանջւել են ա ր դ ա ր ա դ ա տ ո ւ թ ե ա ն տունը շինելու համար։ Այնտեղ են ճնշում արդար բողոքը, այնտեղ են պատժում, զրկում հային. այդ բոլորից յետոյ դեռ ստիպում են իր ձեռքով իր համար տանջարան շինել։ Ասում են որ գայմագամը գոհունակութեան է արժանացել բարձր իշխանութիւնից։ Սակայն վերջինս երբևիցէ հարց տւե՞լ է արդեօք թէ ինչ փողով և ո՞ւմ ուժով շինւեց այն վիթխարի շէնքը, որ առաջինն է ոչ միայն Հասան-Ղալայում, այլև ամբողջ Կարինում։ Կա՞ր մէկը, որ հլու աշխատաւորի տխուր հայեացքի մէջ նրա անհուն ցաւերը, անվերջ տանջանքները կարդար։

Կարնոյ բանդում փակւած են 57-ի չափ Ռուսաստանից վերադարձած գաղթականներ, որոնց միակ մեղքը բռնութիւնից փախչելն է եղել։ Թողել է գաղթականը տուն, ընտանիք, սիրելիներ. տարիներով խմել է պանդխտութեան դառնաբաժակը։ Եւ երբ հայրենիքի կարօտով լցւած՝ քայլերն ուղղում է դէպի արնոտ վաթանը — նրան փտեցնում են բանտում, նրան ասում են. „ինչո՞ւ փախար բռնութիւններից ու զրկանքից, գեավուր“։

Վերջին 2 ամսւայ մէջ մեռել են 3 հոգի՝ չկարողանալով տանել բանտային կեանքի դառնութիւնները. սրանք են՝ ալջեագրաքցի Կարապետը, քէօփրիքիօյցի Կարապետը և մի բագրիշէնցի, որի անունը չկարողացանք իմանալ։ Կան նաև մի քանի հիւանդներ, որոնց վիճակը յուսահատական է։ Բանտարկւածների կանայքն ու երեխաները հոկտեմբեր 3-ին լցւեցին առաջնորդարանը՝ աղերսելով որ առաջնորդը միջնորդէ բռնւածներին ազատելու համար, քանի որ մի կտոր հացի կարօտ են իրենք։ Առաջնորդը յանձն չ՚առաւ միջնորդելու։ Նրանք յուսահատ, արցունքն աչքերին յետ դարձան տուն։

Սեպտեմբերի 22-ին յայտնի եղաւ սուլթանի իրադէն, որով պատւիրւում էր՝ երկրից դէպի դուրս փախչողներին բռնած դէպքում մի-մի ոսկի տուգանք առնեն ամէն մէկից ու բաց թողնեն, իսկ դրսից եկողներին բանտարկեն, մինչև բարձրից կարգադրութիւն կը լինի։ Ուրեմն բոլոր բռնւածները սպասելու են մինչև որ հարիւր հազարաւոր արդար բողոքներ մ ի ն տ ա ր ա լ թ ի անով փաշաները բարեհաճին իրենց գործին ռւէ ընթացք տալ։ Միամիտներ կան, որոնք մեղադրում են գաղթականներին. դրանք չգիտեն, որ տաճիկ կառավարութիւնը դժոխքի յատակից անգամ առիթներ պիտի հանէ հային պատժելու, եթէ չլինեն՝ նոր-նոր պատրւակներ, որոնք անսպառ են։ Ի՞նչ անէ թշւառ գաղթականը. նա փախչում է բռնութեան երկրից, սարէսար է ընկնում, օրերով ճանապարհներ է կտրում, սակայն օտար աշխարհը չէ կարողանում մոռացնել տալ գիւղն ու հայրենիքը։ Քիչ-շատ ապահով օտարութիւնից, նա գերադասում է վաթանի ցաւը ու գալիս է. և դեռ չշնչած կարօտած երկրի օդը՝ մութ բանտի խոնաւ գետնի վրայ է օթևան գտնում։ Երկա՞ր կը տևէ այս դրութիւնը — յայտնի չէ։ Այսքանը միայն կարելի է ասել, որ ոչ մի լաւ հետևանք սպասելու չէ։

ՆԱՄԱԿ ԲԱՅԱԶԻԴԷՆ

7 հոկտեմբեր, 1902

Նորից հաւար, նորից իրարանցում. „Էրմէնիլար ասի օլմիշլար գէնա“ — հայերը կրկին ապստամբել են — ասելով, թիւրք զօրքը շարժւում է ու շտապում այս ու այն կողմ։ Ցուրտ ու ձմեռ հասաւ. ամէն մարդ ջանք է թափում պատսպարւելու ու փակւելու իր տանը. թիւրք զինւորն է միայն, որ հանգիստ չունի. հայ ֆէդայիի վախը սրտում, սուլթանի կատաղի հրամանը ստացած՝ զայրացած թափառում է գիւղից գիւղ։ Մի շաբաթ է որ զօրքերը շարունակ գալիս են ու պաշարում հայ գիւղերը, շտապով փակում են ռուս-պարսկական սահմանին կից մուտքերը։ Խառնիճաղանճ լուրեր հասնում են իրար յետևից՝ Մշոյ, Սասնոյ շրջանում ֆէդայիների կռիւ կայ, հայկական նահանգներում շարժում կայ, կրկնելով ու կատաղելով զօրքը յառաջ է շարժւում. դրդում է բարբարոս քրդին ու համիդիէններին, ոտքի է կանգնեցնում իսլամ տարրին՝ ձեռք բարձրացնելու, կոտորելու հային։ Նա պատւիրում է քրդին չխնայել իր հարւածը, սուրը, զէնքը յանուն հայի — թէ կնոջ, թէ մարդի, թէ երեխայի։ Փատիշայի հրամանն է դա, կանչում է ամէն մի զինւոր և պաշտօնեայ։ Նրանք բացարձակ դիմում են այս ու այն քիւրդ աղային „թէ քեզ մեծ պատւանշաններ կը տրւին, երբ յարգես իսկոյն վեհ. փատիշահի հրամանը“։ Կոտորել ու ջնջել հային, այլեւս գաղտնիք չէ...

Սահմանակից հայաբնակ գիւղեր խիստ կասկածի տակ են. նրանք փակւած են հէնց իրենց տեղում. դեռ ևս ոչ մի տեղ չեն շարժւել այս 10 օրից աւելի է։ Տատանման մէջ են և քիւրդ աղաները, ի՞նչպէս անելը չգիտեն։ Նրանց հրամայում են անցկենալ իրենց միս ու արիւն տւող, իրենց խնամող ու կերակրող հողից, օճախը մարելով անցկացնել, քանդել նրա ամբարը ու մեռցնել նրան ընդմիշտ։ Ահա այս օրերն են, որ անցնում են ու կը գնան հայի գլխին. վտանգը սպառնելի է, սարսափին չափ չկայ. թիւրք զինւորների մոլեռանդ պրօպագանդը՝ հայերը ջարդելու խնդիրը՝ տաք-տաք յուզւում ու տարածւում է բարբարոսների շրջանում. անսպասելի կերպով էլի այսօր 1895-96-ի օրերի պրօպագանդն է յար նկսւել է...

Տաս օր առաջ, Վանի վիլայէթի Ընձու հայ և եզիտաբնակ գիւղի ամբողջ ոչխար ու տաւար թալան տարան։ Նոյն օրերում Ցապաղի սահմանում թալանեցին թիւրք զինւորական պաշտօնեայ (ոմանք ասում են որ օտարականներ) և կինը, որոնք Բայազիտից դէպի Վան պէտք է գնային. այստեղ սպանւել է մի թիւրք զինւոր, տարել են չորս հատ զինւորական հրացան ու ամբողջ գոյքը։ Էլի միևնոյն օրերում սարըմանցի Միլան աշիրէթի քիւրդերը յարձակւեցին կրկին անգամ Շաւօկցի ցեղի վրայ ու կոտորեցին կրկին ութ մարդ ևս...

Այսպէս է անցկենում թալան-թիւրանի աշխարհի օրն ու ժամանակը...

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

2 սեպտեմբեր 1902

Խիզանայ շէյխ Սէյտ Ալի 25 տարեկան երիտասարդ մըն է, նշանաւոր շէյխ Ճէլալէտտինի որդին. մեծ պատիւ և յարգ կը վայելէ շրջակայ թիւրքերու և քիւրդերու

մէջ, մեծ ազդեցութիւն ունի կառավարութեան վրայ և Խիզանի, Սպարկերտի, Շնիձորի, Կեցանի, Ստորին Կարկառի, Դատիկի, Երունի գայմագամները անոր գիտութեամբ կ'ընտրուին և հակառակ անոր կամքին ոչինչ չեն կարող ընել։ Թէև ժառանգական օրէնքով իր հօրեղբայրն է որ շէյխութեան պաշտօնը կը կատարէ, սակայն սա իր լըբութեամբ և գազանութեամբ երկրորդականի է վերածած իր հօրեղբայրը։ Ինքը աշիրէթ չունի. իր շուրջը 40-50 խօլամներ ունի, որովայնէ ընտրեալ քիւրդեր, ամէն կողմէ ժողւած։ Իրեն համար առանձին զինանոց ունի, ուր մի զինագործ արհեստաւոր միշտ կ'աշխատի և 400-է աւելի փամփշտաւոր հրացան պահեստի կը մնայ։ Զինագործը հայ մըն է. շէյխը զայն իր ընտանիքով բռնութեամբ տաճկըցուցած է և իր քով կը պահէ. առանձին պահապաններ միշտ կը հսկեն անոր վրայ։

Վերոյիշեալ ամբողջ գաւառները անոր մասնաւոր տուրք կը վճարեն. իր խօլամներն իբր հարկահաւաք ամէն կողմ կը շրջին և բռնութեամբ ստացած հարկերը, կողոպուտները, աւարը շէյխի տունը կը կրեն։ Եօթ հարիւրէ աւելի զինուած և անզէն քիւրդեր անոր ծախքով կ'ապրին, և այդ ամբողջ ծախքեր վճարողը գիւղացիներ են։ Միայն Խիզանու մէջ 17 հայաբնակ գիւղերու տիրացած և բնակիչները ցրւած է, որոնց մէջ են Պէթամին 40 տուն, Կովէժ 40, Շերէզ 38, Բերդակ 40, Սօրի 50, Խօպան 50 և լն և լն։ Ուրտեղ մի արօտավայր, մարգագետին, արտ լինի, շէյխի խօլամներ անմիջապէս կը տիրապետեն շէյխի անունով։ Իր խօլամները պարտաւորեցուցած է փամփուշտ հայթայթել իրենց համար, որոնք հայ գիւղացիներու ոչխարները յափշտակելով կը տանին կը ծախեն Գօչարներու փոխարէն փամփուշտ առնելով։ Կոտորածէն առաջ վերոյիշեալ գաւառներու մին մի հայաբնակ գիւղ 2-4,000 ոչխար կը պահէր, այժմ շէյխ Սէյիտ Ալիի շնորհիւ շատեր աւերակ դարձած են և մնացեալներու ամենահարուստ գիւղը 200-է աւելի ոչխար չի պահեր։ Սոսկալի մոլեռանդ է, շատ եկեղեցիներ իր հօր պէս ախոռի վերածած է։ Իր յանձնարարականները մեծ յարգանք ունին. զանոնք կրողները ամէն աշիրէթի մէջ ազատ ելևմուտք ունին և պաշտպանութիւն կը վայելեն։

Շէյխ Զէլալէտտինի հայրը Թօփալ հասարակ շէյխ մ'եղած է, Մոկաց երկրէն եկած։ Սկսած է կրօնական խաչագողութիւններ ընել և սուրբի անուն վայելել. իր որդին Զէլալէտտին աւելի յառաջ կ'անցնի։ Պէթումին գիւղն հայ մը կը գտնուէր Գրիգոր անունով, որ նոյն շրջաններու մէջ ամենաառաջին և հարուստ տունն էր։ Զէլալէտտին աչք կը տնկէ անոր հարստութեան, Գրիգորը և մեծ որդին կըսպաննէ, անոր ստացուածքին կը տիրանայ և անոր տունը կը բնակի։ Գրիգորի միւս վեց որդիքը կը բողոքեն, երկու որդին Բաղէշի ճանապարհին սպաննել կուտայ, մնացածներ՝ այր և կին կ'երթան կորսուիլ անյայտութեան մէջ։ Անկէ կըսկսի շէյխ Զէլալէտտինի արագ բարձրացումը թէ հարստութեան և թէ „սրբութեան" մէջ։ Այժմ Թօփալ մուրացիկ շէյխի թոռը Սէյիտ Ալի սարսափ մը դարձած է և այս՝ շնորհիւ թիւրք մոլեռանդութեան և կառավարութեան նեխած ռէժիմին։

—

Տասն օր առաջ ոստիկանութիւնը մեծ իրարանցումի մէջ էր. Ղատախի ճանապարհին վրայ 20-22 տարեկան, Ղատախու թաղէն, Յովսէփ անունով երիտասարդ մը ձերբակալած էին։ Իր քով գտած էին յեղափոխական բրօշիւրներ։ Կ'ըսուի թէ մատնուած է եղեր իր մէկ համաքաղաքացիէն։ Ղատախցին ծեծի և բռնութեան սաստկութեան չտոկալով՝ կը յայտարարէ թէ գրքոյկները Վարդգէսէն առած է և կը ցուցնէ տուն մը, Թազէքահրըզէզ Վարժապետենց տուն, ուր իբր թէ տեսած է զայն։ Ոստիկանութիւնը կարևոր որս մը ձեռք անցնելու մեծ յուսով, առանց վայրկեան մը կորսնցնելու կը պաշարէ տունը ցերեկ ատեն, ինչ որ Վանի խուզարկութիւններու մէջ անսովոր էր. խիստ խուզարկութիւններ տեղի կ'ունենան տան մէջ, ոչինչ չեն գտներ, միայն անգործածելի հորի մը մէջէն կը գտնեն կարգ մը իրեղէններ։ Սնտուկի մը մէջէն կը գողնան վեց օսմանեան ոսկի, ժամացոյց մը և իրենց հետ կը տանին աչքի ընկած արական սեռի զգեստներ՝ շալվար, կեառիկ, քազախիկ, իբրև գ ա զ ա խ ի զգեստ, մինչդեռ տնեցիներու վրայ նոյնիսկ ոստիկաններ տեսած են միշտ։

Խուզարկութեան ժամանակ կոմիսար Մկրտիչ իր թըրքամոլութեան չափը կ'անցնէ իր ապօրինի ընթացքով։ Հորի մէջ գտնուած իրեղէնները նոյն տան վերագրելու համար, սնտուկի մը մէջէն հանած մի մուրհակ կը դնէ հորի իրեղէններու մէջ և 3-4 ժամւան խուզարկութեան ժամանակ՝ յեղափոխականները հեգնելով և անոնց հասցէին յիշոցներ արձակելով՝ կըսպառնայ տան կիներուն ծեծամահ ընել, եթէ անոնք ցոյց տալ չուզեն հրացանի փող մը, որովհետև հորի մէջ անոր կոթը գտած էին, մինչդեռ տնեցիներ կը յայտարարէին թէ մենք վարձւոր ենք և այդ իրեղէններ անշուշտ պատկանելու են տան տիրոջ, որ զինագործ է։ Երկու ոստիկան բիր ի ձեռին կը յարձակին ընտանիքի մօր վրայ՝ խայթուելով անոր ազատախօսութենէն, որ առանց վախնալու բացարձակ կը յայտարարէ անոնց անարդարութիւնը և կ'ըսէ. „քանի դուք այս կերպ վայրագութիւններ շարունակէք, ինչպէս այժմ ալ մեր աչքով կը տեսնենք, յեղափոխականներ անպակաս պիտի ըլլան"։ Նոյն տան երեք երիտասարդները այժմ փախստական են։

Մայիս 27-ին ձերբակալած էին Կարճկանի մէջ Վարդան անունով երիտասարդ մը ևս, որուն վրայէն գտած էին նամակներ և 26 ոսկի, հետևեալ պարագաներու մէջ։ Երիտասարդը մօտակայ գիւղի մը մէկ գիւղացիի ընկերակցութեամբ կիրճ մը անցած պահուն՝ իր դէմ կ'ելնեն 4 քիւրդեր, որոնցմէ մին Հասան աղայ կը կոչւի, աւազակ մը, որ կառավարութենէն փախստական կը շրջի այդ կողմերն իր հօրեղբայրը սպաննած լինելուն համար։ Քիւրդեր կը խուզարկեն Վարդանը և ունեցածը կը կողոպտեն։ Ծանր կուգայ Վարդանի այս. կը խլէ Հասանի ձեռքէն հրացանը և կուղղէ անոր վրայ։ Քիւրդի ընկերները կը փախչին. հրացանը կ'որոտայ և Հասան վիրաւորուած կեղծելով կ'իյնայ գետին։ Վարդան կը չոգի անոր կուրծքին և դրամը ետ կը պահանջէ։ Հասան անոր երկաթէ ձեռքին տակ աղիողորմ ձայներ կ'արձակէ. ընկերներ ետ կը դառնան և խանչալներով կը յարձակին Վարդանի վրայ և ձեռքը ու կռնակը կը վիրաւորեն. Վարդան ուշաթափ կ'իյնայ. կը կապեն և կըսկսին մանրակրկիտ խուզարկութեան. կը գտնեն նամակներ և կ'որոշեն կառավարութեան յանձնել։ Կը տանին Գոմս հայաբնակ գիւղը և կըստիպեն տեղի քահանան կարդալ և բացատրել նամակներու իմաստը։ Քահանան չէ կարդար, քիւրդեր հրացաններ քաշած կ'իյնան գիւղ, աջ ու ձախ կը հարւածեն և ամբողջ գիւղը սարսափի կը մատնեն։

Վարդանի համար կըսկսի այդտեղէն չարչարանքը մինչև Վան, ուր տառապանքի չափը ծայրայեղութեան կը հասնի։ Արդէն խանչալի վերքերէ և ծեծէ ուշաթափ երիտասարդի ոտքերու տակ տախտակներ կը դնեն, վրան գամերու ծայրեր ցցած և կը քալեցնեն. ամբողջ գիշերներ ծեծ և խոշտանգանք իրար կը յաջորդեն խոստովանել տալու համար թէ Վարդգէսը Վանի մէջ որ տուն տեսած է և թէ ի՞նչեր գիտէ։ Վարդան առանց ճիկ մը հանելու գիւղացուն նահատակի մը պէս կը տոկայ այդ ամէնքին, յայտարարելով միայն թէ „ինքը յեղափոխական է“։ Դահիճներ զարմացած անոր կամքի ուժին վրայ, հիացումով կը պատմեն թէ „մենք այդ տեսակ մարդ տեսած չէինք. երբ ուժաթափ ծեծէ և չարչարանքէ՝ ուշաթափ կ'իյնար, կը դադրեցնէինք չարչարանքը, սթափելուն պէս կըսկսէր նախատել մեզ և կը գոչէր, զարկէ՛ք, որչափ որ կ'ուզէք, ես յեղափոխական եմ“։ Մինչև այժմ յարաբերութենէ խզած է. իր եղբայր եկաւ զինքը տեսնելու, չթողին, սպառնացան իրեն ևս բանտարկել. խեղճը երկիւղէն վերադարձաւ իր տեղ առանց եղբօր երեսը գէթ մէկ անգամ տեսնելու։ Թուլամորթ հոգիներու համար Վարդան աննման օրինակ մըն է. կամքի տէր մարդ մը ինչերի չէ կարող տոկալ։

Ամէն անգամ որ ոևէ ձերբակալութիւն կը պատահի և կամ խուզարկութիւն, հակայեղափոխականներու և խօսքի յեղափոխականներու պոռչտուքները ականջ կը խլացնեն. „անխոհեմ են, մեր տունը պիտի աւերեն, ի՞նչ կարող ենք ընել“։ Կարգ մը անիմաստ և վատոգի արարածներու խօսքեր, ոմանք ժողովրդեան մտքերը պղտորելու և ոմանք ալ իրենց անգործութիւնը արդարացնելու դիտումով։ Ուր կրակ կայ, հոն կայ և ծուխ, գործի հետ համընթաց են վտանգ, բանտարկութիւն, մահ. չէ կարելի ընել մին առանց միւսը անտեսելու։ Այս պէտք է լաւ գիտնան մեր Վասպուրականի չարագիները և անոնց նման մտածողները։ Ազատութեան զինուորը կերթայ յառաջ զոհողութիւններով գծուած ճանապարհէն. կը մեռնի Վարդգէնի, Սերոբի, Գուրգէնի և մշեցի Միսակի նման՝ ժպիտ ի շուրթն, արիւնոտ համբոյր մը ղրկելով իր եղբայրներուն. կը բանտարկուի Վարդանի նման՝ դահիճներու իսկ հիացում ազդելով։

Կառավարութիւնը թող սպաննէ, թող բանտարկէ Վարդաններ, թող հետամուտ լինի Վարդգէսներու, հոգ չէ, վաղը անոնց կը յաջորդեն աւելի փորձառու և կամքի տէր զինուորներ և գործիչներ գործը շարունակելու համար։ Կռիւը, երբեմն խուլ և երբեմն աղմկալից՝ պիտի շարունակէ յարատև, հակառակ թիւրքի անգթութիւններուն և հակայեղափոխական վատերու քարոզներուն։ Ուր կամք, յարատևութիւն, քաջասրտութիւն և զոհողութիւն կայ, հոն է և յաջողութիւնը։

ՆԱՄԱԿ ԿԻՐԱՍՈՆԷՆ

27/9 Նոյեմբեր 1902

Ծանօթ բանտարկեալներն, Տրապիզոն և Ամասիա, տակաւին կը շարունակեն մնալ նոյն անստուգութեան մէջ, առանց որոշ դատապարտութիւն մը լսելու կամ մօտաւոր ազատման յոյս ունենալու։ Ի լոյ կը տեղեկանանք թէ զիրենք բանտ առաջնորդող պատճառը հետզհետէ բարդ հանգամանք մը կըստանայ, առաւել ևս ամրացնելու համար կարծես, դժբախտաբար, անըստուգութեան վիճակը խնդրոյն վախճանին։

Տուրքերու գանձման համար իգործ դրուած խստութիւնք առաւել քան երբէք բուռն կերպով կը շարունակուին. թշուառ հասարակութիւն նմանը չտեսնուած տանջանքներու մատնուած է օրը երեկոյ ընելու համար. երթալով իսպառ անհանդուրժելի կը դառնայ կեանքը։ Ոչինչ կայ մխիթարական, ամէն կողմ նոյն արհաւիրքը, նոյն խժդժութիւնք ձեռք ձեռքի տուած լուրջ դաշնակցութեամբ մը, արմատակի ոչնչացնել կըսպառնան կարծես հայ տարրին մնացեալ արիւնն ու աւիւնը։

Երկար կ'ըլլայ միառմի թուել շարքը տուրք գանձելու համար իգործ դրուած վայրագութիւններու։ Գարահիսարի Աներզի գիւղի հօտը երկու ամսուան մէջ 3-4 անգամ կառավարական պալատը կը քշի գիւղի երկսեռ բնակչաց աղեխարշ աղաղակներուն մէջ, իվերջոյ կը ծախուի կէս, քառորդ գիներով։ Կարասի, անկողին, անօթ, գործիք և այլն և այլն բռնի ուժով վերցնել, կապտել ու գրաւել սովորական դարձած են։ Մինչ կըսպասուէր տակաւ մեղմացում և աւելի մարդավայել կերպ. զո՜ւր յոյս. գոնէ օրէցօր աւելի սուր հանգամանք մը կըստանայ։

Մոռցայ վերը յիշելու թէ գիւղացիի մը իշուկը 12 ղրշ. ենչին գումարով մը կը փոխանակուի՝ երբ 12 մէճէտ արժած է իրեն։ Այս օրինակն յիշատակուած է փոքր գաղափար մը կազմել տալու համար այս կողմեր անցած-դարձածին վրայ։

Աւելորդ կ'ըլլայ թերևս յիշել տալ նաև թէ քաղաքիս գլխաւոր բերքը — կաղին — սովորականէն հազիւ ութերորդ մասին չափ եղած է, նմանը չտեսնուած հարուած մը տալով այս տարի միջակ ու աղքատ ստւար դասակարգի տնտեսական արդէն աննպաստ վիճակին։

Երթևեկութեանց արգելք-պատուարը Դամոկլէսի սուրին պէս յարատև մահ կը սփռէ ամէն կողմ և կը դնէ հայ տարրի գրեթէ բոլոր դասակարգերը գերեզմանի եզրը՝ վայրկեանէ վայրկեան մէջը գլորելու համար զանոնք յաջորդաբար։ Դարման, միջոց, փրկութի՛ւն կ'աղերսի ամէն բերանէ։ Ո՞ւր լսող, ո՞ւր պաշտպանող։

ՆԱՄԱԿ ՄԷՐՍԻՆԷՆ

9 Նոյեմբեր 1902

Կիլիկիոյ հայութիւնը բռնութեան ճիրաններու մէջ կը բզկտուի։ Սարսափը այս կողմերու մէջ իր գագաթնակէտին հասած է և թշուառութիւնը իր կատարելութեան։ Երկրի ներսերէն լուր չունինք. բայց մենք որ Միջերկրականի բանուկ նաւահանգստի մը և մօտ շրջականերու մէջ, Եւրոպայի պաշտօնական ներկայացուցիչներու աչքին առաջ կատարուած ամենօրեայ վայրագութիւններուն ականատես ենք, մտածելու անգամ կը սարսռինք, թէ ինչե՞ր կը կատարուին երկրի մութ անկիւններու մէջ վայրագ և կարծես օրհասական բռնակալութեան մը ձեռքով։ Ասկէ տասնեակ տարիներ առաջ հայ ազգը իր ներկայի գերութեան ու թշուառութեան մէջ գէթ ազատօրէն կրնար իր նախնիքներուն ազատ կեանքը, անոնց քաջութիւնները փառաբանել, իր քրիստոնեայ կրօնքին պահպանութեանը համար անոնց մղած պատերազմները երգել և իր անցեալ փառքին վրայ լալ։ Իսկ այսօր նոյն ժողովուրդը, որ քառորդ դարէ մ'իվեր մարդասէր և

քաղաքակիրթ կոչուած Եւրոպայի պաշտպանութեան տակ մտած է՝ միջազգային վեհաժողովի մը կողմէ կնքուած դաշնագրութեամբ, այո, նոյն հայ ժողովուրդի անփորձ և ջահիլ մէկ պատանին, եթէ սխալմամբ ազգային երգի մը մէկ քանի բառերը փախցնէ բերնէն, ի՞նչ պատժի կ'ուզէք որ ենթարկուի... կարգապահութե՞ն, պարզ բանտարկութե՞ն... ափսո՜ս ոչ. այլ առժամանակեայ կամ ցկեանս բերդարգելութեան։ Այդ պատիժն ալ դէթ Թրքական օրէնքի գծած սահմանի մէջ գործադրուէր հապա՛ր երանի. բայց վա՜յ այն հայուն որ Թիւրք պաշտօնեաներու երևակայութեան մէջ իբր քաղաքական յանցաւոր ձերբակալուած և Թիւրք զնդանէն ներս նետուած է։ Թո՛ղ վարագուրուած մնան ներսը կատարուող հրէշութիւնները, որոնք մարդկութեան և մեր պաշտպան Եւրոպայի ճակտին վրայ անջնջելի արատը պիտի մնան։ Եւ յետոյ վճիռ արձակելու մէջ Թիւրք դատաւորներու վերէն ներշնչուած խստութիւնն ու անարդարութիւնը և տրուած պատիժի կիրառութեան մէջ իգործ դրուած անիրաւութիւնները։ Քանի՜ քանի 18-20 տարեկան հայ պատանիներ 2-3 տարի բանտարկուելէն յետոյ, Թիւրք զնդաններու մէջ հիւծախտէ մեռան. քանիներ Թունաւորուեցան, և անոնցմէ մէկն ալ, ո՜վ մարդկութիւն, իբր յիսուն Իւսկիւտարի Թիւրք յիմարանոցի կատաղի յիմարներու մէջ նետուելէ և հոն աննկարագրելի վիճակի մը ենթարկուելէ վերջ, քօլէրայի իբր առաջին զոհ Թունաւորուած դիակը Իւսկիւտարի ափունքին վրայ կրակառն փոսին մէջ նետուեցաւ։ Մտէ՛ք Թիւրք բանտերէն ներս և քանի՜ քանի՜ նիհար, դալկացած հայ երիտասարդ կմախք դէմքերու պիտի հանդիպիք, որոնք տարիներէ իվեր կը տառապին առանց գիտնալու իրենց պատժին օրինական որակը և քանակը։ Բայց ո՞վ է հարցնողը։ Հայ առօրեայ կեանքին այս տխուր դրուագները վերյիշելու մեզ մղեց վերջին քանի մը թարմ դէպքեր, որոնք եկան թշուառ ժողովուրդին արդէն արիւնոտ սրտերը պատռտելու։ Մէրսինի կլիմայի՞ վատառողջութեան պատճառաւ ժողովուրդը մեծամասնութեամբ ամառանոցներ կ'երթայ, ասոնցմէ շատ յաճախուածը՝ Մէրսինէն 6-7 ժամ հեռաւորութեամբ՝ Ֆընտըգ-Բունար ըսուած վայրն է, ուր 150-ի մօտ տուներ շինուած են մերսինցիներու իբր ամառանոց ծառայելու համար։ Հոն բոլոր խանութպանները հայ երիտասարդներ են։ Այս ամառ 6-7 հայ երիտասարդներ մէկտեղ գալով իրենց լուսանկարը քաշել կուտան հայ լուսանկարչի մը, աղբիւրի մը մօտ, ծառի մը տակ նստած։ Յետոյ կըսկսին պզտիկ քէֆ մը ընել և քիչ մ'ալ ազգային երգեր կանչել։ Ասոնցմէ էն պզտիկը, անփորձ և ջահիլ տղայ մը, կանչուած երգը բերանացի սորվելու համար թղթի մը վրայ կը գրէ և գրպանը կը դնէ։ Այս դէպքէն 15 օր վերջ, տղան, որ Ատանայի մէջ վաճառականի մը մօտ ծառայ է եղեր, երկաթուղիով Մէրսինէն Ատանա կը մեկնի։ Հոն կայարանի մէջ փոլիսի մը կողմէն կը ձերբակալուի և երբ վրան կը խուզարկուի, գրպանէն կը գտնուի խեղճ թղթի կտորը և խմբովին քաշուած լուսանկարը, ու անմիջապէս կը տարուի վայրի Պահրի փաշային առջևը։ Վալին թուղթը թարգմանել կուտայ լիրբ, ստոր ու ցած մատնիչ Աւետիս Սիսլեանի միջոցաւ, որ Ատանայի բոլոր հայ ժողովրդին արիւնը կը ծծէ։ Վալին տղան սիրաշահելու համար անմիջապէս փոլիսութեան պաշտօն կ'առաջարկէ 3 ոսկի ամսականով. խեղճ ու անփորձ տղան կը խաբուի տէրութեան ամենամեծ պաշտօնեայի մը խօսքերէն և կ'ընդունի իրեն առաջարկուած պաշտօնը։ Հետևեալ օրը վալին դարձեալ իր առջևը կանչելով տղան անկէ կը հարցնէ երգը որմէ՛ առած և որոնց հետ երգած ըլլալու պարագաները և լուսանկարի մէջ գտնուող տղայոց անունները։ Տղան բոլոր իրողութիւնը կը պատմէ կատարեալ պարզամտութեամբ։ Նոյն օրը իսկ անմիջապէս ոստիկաններ կը ղրկուին և բոլոր տղաքները Ֆընտըգ-Բունարէն հսկողութեան տակ կը փոխադրուին Ատանայ և նոր փոլիսին հետ, անշուշտ, պաշտօնական հագուստը հանելէ յետոյ, կը դնեն բանտ։ Կը դատեն խեղճ տղաքները և վրայէն թուղթ գտնուող տղան 8 և միւսներն ալ 6-ական տարի բերդարգելութեան վճիռ տալով բոլորն ալ կ'աքսորեն Բայասի դժոխային զնդանը։ Այս վայրագ անխղճութիւնը բաւական չէր և ահա ուրիշ ձախորդութիւն մըն ալ եկաւ տակն ու վրայ ընել այս շրջականերու հայութիւնը։ Սսոյ մէջ վերջերս Արսէն անունով երիտասարդ մը կը ձերբակալուի իբրև կասկածելի. կը բռնուին նոյնպէս 10-12 հատ ուրիշ հայ երիտասարդներ։ Բռնուածներ ուղղակի կը տարուին Սսոյ միւթէսարիֆի առաջ, ուր միւթէսարիֆը անձամբ քննութեան ենթարկելէ յետոյ, սաստիկ ծեծել կուտայ զանոնք։ Խեղճ Արսէնի վրայ բերան չ'առնուելիք գազանութիւններ ալ կատարել կուտայ միւթէսարիֆը, այնպէս որ ականատեսներու պատմածին նայելով տղան մինչև իրիկուն կուլայ եղեր։ Ինչո՞ւ զարմանալ. տաճիկ անասնութեան, գազանութեան այս գոհերը ոչ առաջինն են և յայտնի կ'երևի՝ ոչ ալ վերջինը պիտի ըլլան... Սսոյ Էօմէր փաշան իր տիրող արժանի ծառայ մըն է. ճիւաղային տանջարաններ կանգնելու վարժութիւնը արդէն Կեսարիոյ մէջ կատարելագործած կ'երևի։ Կը վախնանք որ առատ հող պիտի գտնէ իր պաշտօնավարութեան շրջանին մէջ, վասնզի կը լսի թէ Արսէն ըսուած բախտախնդիրին քով հարիւրէ աւելի անուններու ցանկ մը գտնուած է. կառավարութեան համար լաւ հունձք մըն է ատիկայ. ցարդ Ատանայէ 6 երիտասարդներ ձերբակալուելով՝ Սիս տարուեցան։ Կառավարութիւնը իր որսերը լաւ մարսելու համար՝ համբ կը գործէ։ Աստուա՜ծ իմ, այս ի՞նչ դարու մէջ կ'ապրինք, չկայ արդարութիւն, չկայ մարդկութիւն։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՑԻ ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՃԻԶՐԸ ԳԱՀԱՌԱԿԻՆ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

(Պատմէն, Թիւրքերէնէ թարգմանուած)

(Շարունակութիւն № 10-ի)

Ճիզէյի մէջ փոքրաքանակ վաճառականութեամբ զբաղուող 50-ի մօտ խանութպաններ իրենց վաճառական գործերուն մէջ իբր դրամագլուխ կը գործածեն Թահիր և Ֆաթթահ աղաներու 50-էն մինչև 100 ոսկիները։ Բուրդի, Ֆիլիկի և գղեխի վաճառականութեան մէջ միշտ 1,000-ական ոսկիները կը շրջաբերին։ Բնաւ հարկ

չկայ, կարծեմ, ըսելու թէ վաճառական գործերու մէջ դարձող այդ 5-6,000 ոսկիի պատկառելի գումարներն ալ պէյթիւլ մալի (պետական գանձուն) և աղքատ ժողովրդին քսակներէն բռնի կողոպտուած դրամներ են։

Գաւառակին գիւղերուն շատ մը հողերը բռնի գրաւելով՝ անոնցմէ մի մասը սպառնալիքի տակ կամ կեղծ վաւերաթղթերով իր անուան արձանագրել տուած է, կամ անոնց տուրքերուն իր կողմէն վճարելու մասնաւոր պայմանագրութիւններով իրեն սեփականութիւն դարձուցած է։

Ո և է գրիչ, մինչև իսկ մարդկային երևակայութիւն, անկարող է նկարագրել կամ մտքի առջև պատկերացնել քանակը այն ամէն գոմէշ, եզ, կով և այլ չորքոտանի անասուններու, ինչպէս նաև արծաթահիւս թանկագին զգեստներու և կանանց զարդի վերաբերեալ այլ և այլ դրամ, ոսկի, մարգարիտ և գոհարեղէններու, զորս խեղճ ժողովրդէն բռնի կողոպտեր և իւրացուցեր են։

Պղտիկ գաղափար մը կազմելու համար կը բաւէ միայն աչք ձգել Թահիր աղայի և իր զաւակներու, եղբօրը և եղբօրորդիներու վրայ, որոնք իրարու չնմանելու պայմանաւ՝ ամէն օր 5-էն մինչև 10 ոսկի արժողութեամբ հագուստներ կը հագնին ու կը փոխեն և ամէն մէկը միմիայն անձնական ծախքերու համար օրական 5-ական մէճիտներ կը մսխեն։ Գալով իրենց տնական ծախքերուն՝ Շահը և Թայ ըսուած արաբներէ և գազաի քիւրդ աշիրէթներէն ամէն օր 50-100 ձիաւոր անոնց տունը կ'իջնեն, իրենք և կենդանիները կը կերակրուին, և ոմանց Պաղտատի գործ կապա և այլ մետաքսեայ զգեստներ նուէր կը տրուին. գասապայի վաճառականները և երևելիները, քաղաքական և զինուորական բարձր անձնաւորութիւնները միշտ անոր օտան կը յաճախեն և անոր հրամանները ստանալէ յետոյ՝ զանազան ապօրինի գործերու և հարստահարութեանց ու զրկանքներու դէմ աչք գոցելու համար կը պատուասիրուին անուշով՝ կաթ, սուրճ, թէյ և առաջնակարգ անուշահոտ սիկարէթներով և այդպէս կը համակերպին տեսակ մը ստրկական հնազանդութեան։ Հարէմի ներքին ծախքերն ալ նոյն համեմատութեամբ են։

Դրամական ներկայ կարողութիւնը թէև գաղտնի, բայց վերև տրուած բացատրութիւններէն մօտաւոր ենթադրութիւններ և եզրակացութիւններ դիւրին է հանել։ Ինք միայն 20 հազար ոսկի հնչուն դրամի տէր ըլլալը յայտնապէս խոստովանած է... Այդ հնչուն դրամովն ու իր միւս հարստութիւնով, իր արբանեակներովն ու մարդիկներով հետզհետէ պարծենալով և գոռոզանալով ապըստամբական շրջանակը հետզհետէ կ'ընդարձակէ։

Թահիր աղային հրամանները կատարելու և բերնէն ելած ամէն մի բառը ճշգրտօրէն և անմիջապէս գործադրելու սահմանուած իր առջևը կազմ ու պատրաստ կը կայնին 50 ձիաւոր արբանեակներ, որոնք ճիզրէյի պէս խուշը գազայի մը զինուորական իշխանութենէն բոլորովին անկախ և անկէ բարձր են։ Այս արբանեակները մարդասպանութեամբ և այլ եղեռնագործութիւններով դատապարտուած և աւազակութեամբ հռչակ հանած մարդիկներու և զինուորութենէ դասալիք եղածներու մէջէն ընտրուած են, որոնց իւրաքանչիւրը մարթինի հրացաններով և դաշոյններով զինած և անոնց տակը երկու հազարական ղուրուշ արժողութեամբ մատակ ձիեր տուած է։ Այս ձիաւորներու ընտանիքներուն անոնց բազմանդամութեանը համեմատ հագուստներ և թոշակներ յատկացուցած է։ Արդ եթէ այդ մարդիկներուն յատկացեալ ձիերու և զէնքերու արժէքը (ծախքերը չհաշուելով), առնուազն հազար, իրեն և իր զաւակներուն, եղբօրը և եղբօրորդիներու գործածութեան յատուկ 100-ական ոսկի արժողութեամբ տասը հատ նժոյգներ, իր ընտանիքի և օպայի ուրիշ վայրեր փոխադրութեան ծառայելու համար 10-20-ական ոսկինոց 40 հատ ջորիներ, 10 հատ ճերմակ գրաստներ և իհարկին իր հպատակութեան տակ գտնուող աւազակաբարոյ մարդիկներու ձեռքը յանձնելու նպատակով պատրաստ 50 մարթինի հրացաններ, 30-40 վեցհարուածեայ զէնքեր և շատ մը թուրեր, սուրեր, դաշոյններ, սուիններ, որոնք իր տան մէջ միշտ կազմ ու պատրաստ կը սպասեն, առնուազն 2 հազար ոսկի հաշուենք, մինակ երիվարներու և զէնքերու գումարը 3 հազար ոսկիի կը բարձրանայ։ Ահա այդ կերպով տեղական իշխանութիւններու և հնազանդ խեղճ ժողովրդին դէմ ցուցադրած պերճանքներով, և մանաւանդ շրջականները պտտելու ելած պահուն, կամ՝ իր զանազան զարձասիրական ու հեշտասիրական ճաշակին գոհացում տալու դիտաւորութեամբ, իր ոևէ ցանկացած մի վայրը գացած միջոցին՝ վայրենի խուժանի մը արշաւանքը յիշեցնող կերպերով զանազան և գոյնզգոյն հագուստներ ու տարազներ հագած և ոտքէն գլուխ զինուած ձիաւորներ իր և իրեններուն շուրջը կարգ-կարգ շարուած՝ լեռները և սարերը թնդացնող աշիրէթներու և պէտէվի արաբներու յատուկ ձայներ և աղաղակներ արձակելով, տեսակ մը երգեր և պոռչտուքներ դուրս տալով, և այլ զանազան ցոյցերով և հին պատմութիւններու մէջ անդամ նմանը չյիշուած այլանդակ ձևերով և վարմունքներով՝ խեղճ ժողովուրդը միշտ ահ ու սարսափի տակ կը պահեն։

ՈՐ ՄԵԾՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ամէն ոք գիտէ որ ասկէ 10 տարի առաջ Թահիր աղային պատիւն ու յարգանքը, հռչակն ու կարողութիւնը այն ժամանակուան իր նիւթական կարողութենէն աւելի խեղճ էր, այնքան հասարակ որ անոր և ոևէ յարգելի կամ ազնուական ընտանիքի մը միջև բաղդատութիւն մը ընել բոլորովին անկարելի էր։ Բայց Միրանը Մուսթաֆա փաշային հետ ունեցած խնամութեան կապերը շուտով ընձեռեցին անոր բարձրաստիճան և պատուաւոր անձնաւորութիւններու հետ ծանօթութիւններ մշակելու և կառավարական պաշտօնարաններու և ակումբներու յաճախելու միջոցները։ Ժամանակ մը վերջ իր հին ու խախուտ տան մէջ օդա մը բանալով կրսկսի աղայութեան արհեստը իգործ դնել և կառավարական գործերուն միջամտել և ժողովրդի մի մասին հետ միանալով խռովարարական կապեր հաստատել կամ իհարկին զայն խզել, կուսակցութիւններ շահիլ և տեղական կառավարական պաշտօնեաներու իհարկին բարեկամութիւն կամ թշնամութիւններ ցոյց տալ։ Ահա այս միջոցներով կը յաջողի իր նպատակին հասնելու ճամբան պատրաստել. և հետզհետէ մէկ կողմէն յիշեալ միջոցներուն դիմելով, միւս կողմէն ալ իրեն հակառակող և դիմադրող ուժերը չչատելու համար Մուսթաֆա փաշային օգնութեան և աջակցութեան դիմելով՝ կը յաջողի ժողովրդի մի մասը իր հպատակութեան տակ անցնելու. մի կողմէն ալ քսու և սինլքոր դասակարգ մը ալ իր գլուխը ժողվելով, անոնց գործակցութեամբ կը ջանայ իր անվայել նպատակը և անհաճոյ գործերը առաջ քշելու

դիւրութիւնները ձեռք անցնել։ Վերջապէս այդ և այլ միջոցներով կը ձգտի տեղական իշխանութեան հիմնական պարտականութիւններէն գլխաւորը կազմող՝ հանրային խաղաղութեան պահպանման և հարկերու գանձման գործերուն կանոնաւոր ընթացքը խափանել, պաշտօնեաներու ոմանց պաշտօններուն միջամտել և զանոնք իր կամքին հպատակեցնել։ 1311 տարւոյն (1895) սկիզբներուն էր, ուր տեղական կառավարութիւնը ներկայ վիճակին ծանրակշիռ և վտանգաւոր հետևանքը կառավարական պաշտօնեաները միանալով հաստատեցին համիդիէ զօրագնդի հրամանատար գնդապետ Իպրահիմ պէյի խղճամիտ և արդար բողոքագրին պարունակութիւնը և դիմումներ ըրին բարձրագոյն իշխանութեանց, որու հետևանօք Թահիր և եղբայրը Ֆաթթահ աղաներուն բանտարկութեան վերաբերեալ 4-րդ բանակի միշտիրէն ստացած հրամանի մը համեմատ 25 օրւայ բանտարկութիւն մը կրած են, որով ժողովրդին և պաշտօնեաներու տագնապն ու սարսափը պահ մը փարատած էր։

Այդ դէպքը մեծ զայրոյթ և ցասմունք կը պատճառէ Մուսթաֆա փաշային, որ միանալով այն ատենուան տեղւոյս գայմագամ Ուլուվվի պէյին հետ, որ Ռէշուփի նահիյէէն կը վերադառնար, և որուն շահախնդրական ոգին հանրածանօթ էր, աղաները բանտէն կ'արձկեն, և գնդապետ Իպրահիմ պէյն ալ իր պաշտօնէն կ'արձկեն։ Թէև պաշտօնեաներու և ժողովրդին կողմէն լիվային և վիլայէթին մատուցած անմիջական բողոքներուն վրայ գայմագամը պաշտօնով Նիզիպին փոխադրուեցաւ, բայց գնդապետ Իպրահիմ պէյին ուրիշ տեղ փոխադրելու և աղաներուն բանտէն ազատ արձկուելու պարագաները նպաստեցին բռնութեամբ շղթայազերծումին և անոնց յանդգնութեան մեծապէս աճումին։ Ահա այն ատենէն իվեր սկսած է կառավարական պաշտօնեաներու դէմ զրպարտութիւններ յերիւրելու և տեսակ տեսակ հալածանք և նախատինքներ իգործ դնելու սիստէմը։

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆՑ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ի միջի այլոց երկրագործական պանգիղ հաշւապահը Մարտինցի Իպրահիմ էֆէնտին, որ այն միջոցին պաշտօնանկ եղած էր, անոնց աւազակային ծառայութեան մէջ գտնուող արբանեակներու միջոցաւ իրենց տունը կը կանչուի և հրապարակաւ գանակոծուելէ վերջ ինչք և ստացածքը ծախել կը տրուի և 20 ոսկիի ալ տուգանքի կ'ենթարկուի։ Մալ-միւտիր Մարտինցի Հէյխ-Մուսա-Զիա էֆէնտին համիդիէ գունդերու փոխ-գնդապետ Զաքարիա պէյին ծեծել տուաւ և խեղճը այն գիշեր իսկ անպատմելի դժուարութեամբ կարողացաւ ինքզինքը ճիզրէէն դուրս նետել։ Նուֆուսի (մարդահամար) պաշտօնիայ Եահիայ էֆէնտին տեսնելով որ զինք ալ կըսկսի նախատել, իր փրկութիւնը հրաժարելու մէջ գտնելով միւթէսարըֆին իր հրաժարականը մատոյց։ Մնացեալ միւս պաշտօնեաները, որոնք այդ եղելութիւնները կը տեսնէին բայց փախչելու առիթը չ'ունէին՝ ստիպուեցան ճակատագրին համակերպելու և Թահիր աղային բոլոր հրամանները հնազանդութեամբ ընդունելու և հետևաբար ժողովրդին նկատմամբ ի գործ դրած հարստահարութիւնները և հալածանքները այն աստիճան անհամեմատելի չափեր ստացան, որ գաւառակի ներքին խաղաղութիւնը և ժողովրդին հանգստութիւնը և խաղաղութիւնը բոլորովին կորսուեցան։

Ճիշդ այդ միջոցներին էր՝ որ ճիզրէէի Ահմէտ Հաճը Լէօքի 40-50 զուրուշ արժողութեամբ ստացածքը և արմտիքը, 2 գիւղերը և ալիւրի ջաղացքը, 3 հատ խանութը և 50 ոսկինոց մի մատակ ձին բռնի իւրացուց։ Միւֆթիի Հաճի-Ահմէտ-Հիլմի էֆէնտիի 20 հազար զուրուշնոց տանը բռնի տիրացաւ։ Տեղւոյն երևելիները կեղեքելու նմանօրինակ ուրիշ շարք մը ցաւալի արարքները վերջապէս անտանելի դարձած ըլլալով՝ տեղւոյն երևելիները և այլք յուզած դիմադրութեան սկսեցին, որով ծագեցաւ կռիւ մը, որ շարունակեց անընդհատ 3 օր, նախ գաւազաններով և քարերով և յետոյ զէնքով, ուր երկու կողմէն 20-30 մարդիկ վիրաւորուեցան և ծխավաճառ Սատօն ալ մեռաւ։ Բայց և այնպէս Մուսթաֆա փաշային ապդեցիկ կողմնակցութեան շնորհիւ խեղճ մարդիկներ այնքան զրկանքներ կրելով հանդերձ, Տիգրանակերտ կանչուեցան և ակամայ համաձայնութեան և հաշտութեան մը բռնադատուեցան։ Այդ բռնապետական արարքները, որոնք ճիզրէէի, Մարտինի և Տիարպէքիրի դատարաններու մէջ գտնուող պաշտօնական տօքիւմանտներով և ժողովրդին ստուգած արդար բողոքներովը հաստատուած են, ուշադրութիւնը գրաւեց Տիարպէքիրի կուսակալ Խալիտ փաշային՝ երբ նահանգը քննութեան ելած էր, և տեսնելով թէ Միրանլի Մուսթաֆա փաշային պաշտպանութեան շնորհիւ Թահիր աղային իգործ դրած խժդժութիւններու պատճառաւ երկրին խաղաղութիւնը վրդովուած և երկիրը անիշխանութեան մատնուած է, Ն. Վսեմութիւնը խորապէս վրշտացած՝ կուսակալութեան կեդրոնը դառնալուն այդ ցաւալի կացութիւնը մի կերպ դարմանելու դիտաւորութեամբ, գայմագամի փոխանորդ կը կարգէ Տիգրանակերտցի Ապտին զատէ Հանգուցեալ Ահմէտ պէյը և հոն կը ղրկէ։ Երբ պէյը ճիզրէ հասաւ և իրերու դրութեան տեղեկացաւ, շնորհիւ Վ.Հ. Սուլթանի իսկոյն ձերբակալել տալով Թահիր, Ֆաթթահ և Հէյխ Ալիի որդի Ապտիւլլահ աղաները՝ Տիարպէքիր փոխադրեց, որով հանրային անդորրութիւնը, որ ժամանակէ մը իվեր վրդովուած էր, դարձեալ իր բնական վիճակին վերադարձաւ և այդ առթիւ ալ իր բոլոր հպատակները աղօթքներ կարդացին Ն. Կայսերական Վ.Հ. փառութեան թանկագին կենացը համար։

(Կը շարունակուի)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ԶՈՀ

(Խաչատուր վարժապետի եկ. հայրուկ Ցարութիւնի յիշատակին)

—

Երկու կախաղան, երկու դիակներ օդի մէջ կախուած։ Մէկը կատաղի, խիզախ ֆեդայի, միւսը գիւղական համեստ ուսուցիչ։ Տարբեր բնաւորութիւնների տէր, տարբեր գործի մարդիկ, բայց միևնոյն ժողովրդի, միևնոյն կեանքի զաւակներ։ Միևնոյն բախտի, միևնոյն կախաղանի նահատակներ։

Երկու թանկագին ընկերներ։

1899 թուի աշունն էր. Տարօնի հերոս Սերոբ՝ փաշան, մեր թարկագին ընկեր Աղբիւրը, ընկերներ էր պահանջում, օգնութիւն էր խնդրում՝ օգնութիւն զէնքի, մարդու, օգնութիւն հայ ժողովրդից։

Ինչո՞ւ չի կորցրել մեր ժողովուրդը իր անտարբերութեամբ, ինչո՞ւ չէ կորցնելու դեռ ևս։

Այդ ժամանակ ես մեր յեղափոխական շրջանները օգնութիւնը որչափ անհրաժեշտ, նոյնչափ անկարելի էին համարում։ Զախորդ հանգամանքները խօ՛ մեր գլխից անպակաս էին եղել, են և լինելու են։ „Չպէտք է խաղաղութիւնը խանգարել“, ասում էին խոհեմութեան մէջ բորբոսնած տէր-աղաները։ „Զինուած բազուկները բացի վնասից օգուտ չեն կարող բերել“, ասում էին մեր ընկերներից շատերը և ձեռքերը կրծքին, արցունքները աչքերին անիծում էին չար բախտը...

Կային և այլ ընկեր-ֆէդայիներ, որոնք ոչ արցունք թափել գիտեն և ոչ էլ ձեռքերը ծալել, ծալապատիկ նստել։

— Օգնութի՜ւն, բացականչեցին նրանք ու ֆէդայիների մի փոքրիկ բանակ, արհամարհելով բորբոս խոհեմութիւնը, դուրս խուժեց անտարբերութեան ծոցից՝ ատամները սեղմած, ճակատը կնճռած. պինդ սեղմեց հրացանը կրծքին և առաջ անցաւ...

Աւա՜ղ, ուշ էր։ Երկու օր միայն, երկու անիծեալ օրեր, բաժանեցին մեզ իրարից։ Այլապէս, եթէ ոչ յաղթական, գէթ կողք կողքի, ծունկ ծընկի կը պառկէինք իրար քով, մեր պաշտելի խմբապետի հետ։ Անխիղճ օրեր, անիծեալ նախախնամութիւն։

Հոկտեմբերի 24-ին Սասնոյ բարձրերում նահատակւում է պաշտելի Սերոբը, իսկ 26-ին մեր օժանդակ զինակիր խումբն է կռւի բռնւում Ալաշկերտի Խաստուր գիւղում. Նոր զոհեր, նոր նահատակներ...

Ասում են, որ մարդու արտաքինը մի տեսակ հայելի է իր ներքին կեանքի, որ ներքին բարեմասնութիւնները, կորովը, ուժն ու քաջութիւնը երբեք չեն ծածկւում։ Սակայն մեր ընկեր ֆէդայիների շարքերում պատահում են ոչ սակաւ դէմքեր, օրինակներ, որոնք հիմնովին հակառակ են այս կարծիքին։

Ահա ձեզ մէկը, որի արտաքինը ուժի, արիութեան ու երիտասարդական բոլոր բարեմասնութիւնների կատարեալ արտայայտիչն է։ Ահա և միւսը, որի արտաքինը շատ քիչ բան կարող է ձեզ ասել նրա ներքին կեանքի նրա հոգու էութեան ու ուժի մասին։

Բուլանըխի Կողք գիւղացի Աւետիսը, որին ընկերներս Ցարօ էինք անւանում, ունէր մի այն տեսակ դէմք, որը սպրտում էր ձեր ուշադրութիւնից։ Նրա հանգած աչքերը, կարծես արժանի չլինէին գնահատութեան։ Գլուխը քարշ, մէջքը մի փոքր կռացած, սուս ու փուս, նոյնիսկ եթէ կ'ուզէք, մի փոքր ծոյլ, նա կարծես այս աշխարհից չլինէր։

Ինչո՞ւ Աւետիսը ընկերների անհոգ ու ուրախ կատակներին չէ պատասխանում, ինչո՞ւ է սառել նրա երիտասարդ կեանքը։

Օ՜, այն ո՞ր դաշտը, ո՞ր սարն է մեր ամայացած հայրենիքում, որ արև-լուսնի տակ իր բնական գոյներով լինի զարդարւած։ Կա՞յ արդեօք մեր հայրենի երկրում մի թիզ հող, մի ժայռի կտոր, որ մեր եղբայրների ու քոյրերի արիւնով ներկւած չլինի։ Կա՞յ արդեօք մի գետ, մի լճակ, որի հայելու մէջ հուր-հրդեհի բոցերը չնկարուէին իրենց ահռելիութեամբ։ Ի՞նչն է բնական մեր տարաբախտ հայրենիքում, որ Աւետիսը իր բնական մեծութեամբ ու բարեմասնութիւններով տեսնելուն պէս աչքի ընկնէր։

Պաղ էր Աւետիսը, մի պաղութիւն, որ ոչ թէ թախիծ, վիշտ կամ երկիւղ էր արտայայտում, այլ մի տեսակ թունաւոր, խորհրդաւոր լռութիւն, մի տեսակ դարան մտած գիշատիչ լռութիւն, որը ամէն մի ակնթարթ պատրաստ է դուրս ժայթքել և միանգամից կլանել թունաւորել ճանկն ընկած որսը։

Ահա ձեզ Խաստուրի ճակատամարտը, ահա ձեզ Աւետիսը։ Նայեցէք նրան։ Նրա կարմրած, բոցավառւած դէմքը ողողւած է քրտինքի մէջ։ Լարւած վրիժառու անհանգստութեամբ փայլում, դառնում են նրա աչքերը իրենց կոպերում։ Նա այլեւս կռացած չէ, նրա ուսերն ու թիկունքը շտկւել, աժդահայի է նմանում։

— „Առա՜ջ խիզախենք իբրև նահատակ“... որոտում է իր ահեղ ձայնով կռւի երգը։

— Աստուա՛ծ սիրես, Ցարօյին նայէ, Ցարօյին — ասում է մի ֆէդայի — անպիտանը հաց ուտելու շնորհք չունէր, այժմ կրակ է կտրել։

— Գրողը տանի դրան, պատասխանում է միւսը, տեսա՞ր ինչպէս վայր գլորեց իրարու վրայ Դարվիշ աղային ու նրա որդիներին։

Հա՛ ջան, Ցարօ, ջանիդ ղուրբան, ֆէսին զա՛րկ, ֆէսին, ձայն է տալիս երրորդը։

— Խորադա՛ռ, պատասխանում է Ցարօն գնդակահար զինւորի վերջին խոխոացին ու ոտնակոխ թռչում է միւս կողմը ու ժպտում։ Նա այժմ Աւետիսը չէ, այլ մեր սիրելի Ցարօն. նա ֆէդայի է։

Երեկոյ է։

Տղե՛րք, կրակ, կրակ տեղացէ՛ք, ձեզ մատաղ, լսւում է խմբապետի հրահանգը։ Կրա՛կ, որքան ուժ կայ... տե՛ս, պոկ եկան դիրքերից, մեզ վրայ են վազում։ Կրա՛կ, կրա՛կ, ձայն են տալիս ֆէդայիների շարքերը և կրակը տեղում է թշնամու վրայ։

Սակայն մեր կրակը չէ կանգնեցնում թշնամուն։ Նրանք թռչում են իրենց դիակների վրայով և գրոհ են տալիս մեզ վրայ։ Ցարօն վիրաւորւած է սւինի հարւածով։

— Նա մեռաւ, ասում է ընկերներից մէկը։

Մենք գնում ենք հեռու։

Աւետիսը բանտումն է Խաչիկ վարժապետի հետ։ Նա դարձեալ լուռ է. նա չի թողնում տեսնողի վրայ տղամարդի տպաւորութիւն։

Ահա և կախաղանը։

Նա քայլում է շղթայւած, շրջապատւած զինւորներով. նրան հետևում է մեր սիրելի Խաչիկը։ Նա նորից ֆէդայի է, նա նորից մեր սիրելի Ցարօն է. նոյն գոռոզ, նոյն կատաղի աժդահայ ֆէդային, ինչպէս էր և կռւի դաշտում։

Կանգնում է կախաղանի առաջ, շրջապատւած ամբոխով։ „Սա կախաղանները չեն կրնար սարսափ ազդել հայ հայդուկի վրայ, որ կը թքնէ ատանկ կախաղաններու. զանոնք պատրաստողներու ու ֆերմանով զանոնք պատրաստել հրամայողներու անամօթ ճակտին։ Սա կախաղանները աւելի ևս պիտի գրգռեն հայդուկի վրիժառու զգացումները և պիտի մղեն զայն աւելի յամառ կռւի։ Վրէժ կը խնդրեմ ընկերներէս, վրէժ“... Մէկ կողմ հրելով դահճին, չւանը կ'առնէ ձեռքէն ու վիզն կանցնէ“ — գրում է ականատեսը։

*

Պատահում են մօմէնտներ, վայրկեաններ, երբ անհատը իր ամբողջ մեծութեամբ, իր ամբողջ հոգու ուժով ձեր առաջն է կանգնում, արձանանում ու անմոռանալի, յաւիտենական դրօշմ է դնում ձեր յիշողութեան ծալքերում. մինչև անգամ պատահական անձի, նոյնիսկ

արիւնարբու քրդի, տաճկի մէջ խորին յարգանք ու ակնածութիւն զարթեցնում։

Ահ, ի՞նչեր չեմ կատարում մեր սև օրերում արեան, աւարի, մահու ու կեանքի մրցման ասպարիզում։ Հերոսական մի քայլ, խրախուսիչ մի խօսք, ինքնըստինքեան չնչին, բայց և այնպէս յարմար ու տեղին՝ ունենում են ցանկալի նշանակութիւն և հետևանք. տնօրինում, վճռում են պատիւն ու կեանքը, ընկերների բախտը։

Ահա ձեզ մի ուսուցիչ, մի համեստ, վտիտ կազմուածքով էակ, ձեր առաջն է արձանանում և ձեռքի մի շարժումով սառած հոգի է տաքացնում, մեռած մարմնին կենդանութիւն հաղորդում, յոգնած, ջարդուած, քաղցած ու անքուն ֆէդայիին մէկ երկու խօսքով կեանք ու աշխուժութիւն ներշնչում։ „Թող իմ արիւնն էլ մեր սրբազան դատին նուիրական լինի, թող մեր նահատակ դիակների վրայ հիմնապնդի մեր և մեր սերունդների փրկութիւնը, ազատութիւնը“ [1]։ Ահա այս խօսքերով ընդունեց մեզ գիւղական համեստ ուսուցիչ, մեր սիրելի ընկեր Խաչիկը։

Նոր չէր Խաչիկի համար ֆէդայի տեսնելը, նոր չէր ֆէդայիի համար նրա նուիրական յարկը։

Ով կարող է նկարագրել այն յոյզը, այն արցունքները, որով նա մեզ ընդունեց դժոխքի, սուլթան Համիդի տիրած երկրի հովանաւորութեան տակ։ Ահ, ի՞նչ արժէ այն նուիրական համբոյրը, այն գրկախառնութիւնը, որով մենք իրար հանդիպեցինք։ Որպիսի՞ կսկիծով լսեցինք կուից յետոյ նրա մահը [2]։ „Խաչիկը այլևս չկայ“, շշնջացին մեզանից շատերը և նայեցին դէպի երկինք, կարծես հուժկու բողոքն էին առաքում երկնաւոր անողորմ, անխիղճ դատաւորին։

„Խաչիկը այլևս չկայ“, կրկնեցին միսները ու դառնացած պինդ սեղմեցին ատամներով մերկ խանչալները։ Որպիսի՞ կսկիծ, վրէժի որպիսի՞ բորբոքում։

Եւ վաղաժամ նահատակին վիճակուած էր դեռ ևս երկու տարի խոր ու մութ զնդաններում ապրել, մեր Աւետիս-Ցարոյի հետ միասին ու նահատակի պսակ ընդունել կախաղանի վրայ։ Եւ քայլում է Խաչիկ, հետևում քայլ առ քայլ ֆէդայի Ցարոյին դէպի կախաղան։

Նա սիրում էր ֆէդայուն և ֆէդայիի հետ կախաղան բարձրացաւ։

Հանգիստ ձեր ոսկրներին, պաշտելի ընկերներ, թող ձեր վրիժառու ոգին, կուի դաշտում՝ վրէժի կայծեր, բոցեր բորբոքէ մեր սրտերում...

ՓԼԴԱՑՈՒ ՑՈՒՇԵՐԻՑ

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԱՆՅՈՒԹԵՐԻՑ

Le Mouvement Macedonien-ի վերջին համարներում մենք գտնում ենք մի շարք տեղեկութիւններ Սալոնիկի, Մոնասդիրի, Կոսսովոյի և Ադրիանուպոլսի վիլայէթների դրութեան մասին։

Զօրապետ Ցօնչէվը ապստամբ խմբերի գլուխն անցած հարուածներ է հասցնում թիւրք զօրքերին և քաշւում լեռները։ Սպանութիւններ են կատարւում խմբովին և մասնակի, զէնք են բաժանւում մահմէտական ամբոխին, խուզարկութիւններ են կատարւում, կեղծ նամակներ են գցում բանտարկելու նպատակով. բաշիբոզուկները կողոպտում են գիւղերը և այրում, լրտեսները սպանւում են համբերութիւնը հատած գիւղացիների ձեռքով։ Պատանիները բռնաբարւում և սպանւում են բռնաբարողների ձեռքով։ Բանտերը լեցուած են՝ անմեղներով։ Քանի քանի անմեղ օրիորդներ և կանայք բռնաբարւել են՝ ձեռները և ոտները կապուած՝ ամուսինների և եղբայրների առաջ։ Ի պատասխան այս մինչև սրտի խորը խոցող անարդարութեան՝ արդար զայրութիւն և վրէժով լեցուած գիւղացիները միանում են յեղափոխականներին, որոնք քաջութեան հերոսական օրինակներ են ցոյց տալիս։

Սրօրսկօ գիւղի մօտ մի փոքրաթիւ խումբ թիւրքերի յարձակման է ենթարկւել։ Խումբը քաջութեամբ յետ է մղել յարձակումը և մեծ վնասներ պատճառել թիւրքերին։ Հետևեալ օրը նոր գնդեր են ուղարկւել, որոնց ուժի առաջ տեղի տալով, խումբը նահանջել է քսան սպանուած թողնելով, մինչդեռ թիւրքերի կողմից կուի դաշտում մնացել է 100 հոգի։

Մի անանտես պատմում է, որ 120 հոգուց բաղկացած մի խմբի դէմ դուրս են եկել 1,000 զինուոր, որոնք գիշերը գաղտնի մօտեցել են ապստամբներին։ Վերջիններս նկատել են այդ և վճռել են գիշերով, լուսնեակի լուսով յարձակում գործել։ Երբ մօտեցել են թշնամուն՝ վրէվոգան (հրամանատարը) մի ռումբ է գցել, որ ահագին իրարանցում է պատճառել թշնամու բանակում, և ինքը իր խմբով անվնաս անցել է դիմացի սարը։

Բուլգարական „Բոլգարսկի Տօրկովսկի վէստնիկ“ կիսապաշտօնական թերթը հաղորդում է՝ որ գնդապետ Եանկովը իր գնդով հոկտեմբեր 2-ին շրջապատուած լինելով թշնամու զօրքերից՝ Սմօրտէշ և Զագօրիչէնի գիւղերի մէջտեղում, անել դրութիւնից դուրս գալու համար՝ մի ճառով ապստամբներին ոգևորելուց յետոյ, առաջ է տանում զօրքը և յարձակւելով սուիններով ճանապարհ է բաց անում։

Հրաշքներ են պատմում նմանապէս վօէվոդա կուտրալի, որ մակեդոնական Դէվէտ է կոչւում, 70 հոգուց բաղկացած խմբի մասին։

Սերբինովօ գիւղի շրջակայքում մի ընդհարումն է տեղի ունեցել յիսուն ապստամբի և 800 տաճիկ զինուորների մէջ։ Ապստամբները կորցրել են միայն 4 սպանուած և տուել են 3 վիրաւոր, իսկ տաճիկները ունեցել են 100 զոհ, որոնց մէջ 2 սպայ։ Նոյեմբեր 18-ին Գրատէվկօ գիւղի մօտ մի ուրիշ ընդհարում է պատահել 15 յեղափոխականի և տաճիկ զինուորների մէջ։ 5 ժամ տևող կուից յետոյ տաճիկները կորցրել են 15 սպանուած և կրկնակին վիրաւորուած, մինչդեռ ապստամբները ոչ մի զոհ չեն տուել։

Պատմում են նմանապէս մակեդոնացի կանանց հերոսական սխրագործութիւնների մասին, որոնք ցոյց են տուել մեծ տոկունութիւն, սառնասրտութիւն և անվեհերութիւն։ Երևում է այժմս, որ նրանցից շատերը լաւ հրացանաձիգներ են...

Սոֆիայի մակեդոնական կոմիտէի ստացած տեղեկութիւններին նայելով՝ թիւրք զօրքերը շատ վատ են հագնուած։ Նրանց մեծամասնութիւնը գրեթէ ոտաբոբիկ է ման գալիս և դժկամակութեամբ է կուի գնում։ Մի յարձակման ժամանակ զօրքը ապստամբւում և հրաժարւում է

---

1) Տես „Դրօշակ“ N՝ 1, 1899 թ.

2) Պատմում էին սխալմամբ, իբր թէ նախ քան կռիւը, Դարվիշ աղան է խանչալով սպանել նրան։

կռուի գնալ։ Ապստամբ մակեդոնացիները յանկարծական, անսպասելի յարձակումների են ենթարկում Թիւրքաց զօրքերը։ Այս պատճառով զօրքի մէջ նկատւում է կարգապահութեան բացակայութիւն և յուսահատութիւն։

Ձմեռը վրայ է հասնում։ Ընդհանուր կարծիք է, որ յեղափոխական գործունէութիւնը Մակեդոնիայում անհրաժեշտօրէն կանգ կ՚առնի առժամանակ, գարնանը աւելի ուժգին թափով վերսկսելու համար։ Բայց գազան բաշիբօզուկների և Եըլդըզի ճիւաղի ձագուկների ախորժակը միշտ բաց է թէ ամառ և թէ ձմեռ. ուստի վերջին նոյեմբեր ամսւայ ստացւած տեղեկութիւնների համաձայն, քաղցած գայլերի արշաւանքները դեռ չեն դադարում դէպի մակեդոնական գիւղերը, սպանելու և կողոպտելու նպատակով։ Սակայն այն բոլոր գազանութիւնները, որ գործւում են աւելի և աւելի են բորբոքում վրէժի ծարաւ ապստամբ քաջերի եռանդը, որոնք ձմեռնային հանգստութեան մասին չեն էլ մտածում։ Ապստամբ խմբերը ցրւած չեն։ Նրանք մնում են լեռներում։ Կառավարութիւնը խուսափում է նրանց հետ ընդհարում ունենալուց և երբ վերջիններս իջնում են սարերից, տաճիկ զինւորները ծակ ու ծուկ են մտնում և այնպէս են ձևացնում, իբր թէ չեն նկատում նրանց։

Այլ է գործ ունենալ զինւած, մահը աչքն առած ապստամբների հետ, այլ է անպաշտպան գիւղացիների հետ։ Սարսափը շարունակում է տիրել ամբողջ Մակեդոնիայում, որովհետև Եըլդըզի թելադրութեամբ քրիստոնեաներին ոչնչացնելու համար կազմակերպւած կօմիտէները անգործ չեն մնում։ Այս աւազակներին աշկարայ կերպով գործակցում են զապթիէներն ու զինւորները, իսկ իրենց գոյքը և պատիւը պաշտպանող գիւղացիները մեղադրւում են իբրև պետական յանցաւորներ։

Ջումայայից գրում են, որ Ժանգա, Սեւտա և Մագդա նորատի կանայք մեռել են չդիմանալով այն տանջանքներին, որոնց ենթարկւել են այդ դժբախտները։ Երևակայել պէտք է այդ խեղճերի դրութիւնը, որոնք ստիպւած են եղել յագուրդ տալ յ ի ս ո ւ ն զինւորի գազանական կրքերին։

Նոյն տեղից հաղորդում են, որ մի ծերունի, Նիկօլա անունով, ահռելի տանջանքների է ենթարկւել։ Մինչ վեց զինւոր ծերունու աչքերի առաջ բռնաբարում էին նրա երկու աղջիկներին, միւս չորսը նրան գանահարելուց յետոյ, այրեցին խարոյկի վրայ։ Հինգ րոպէից դժբախտ հայրը խելագարւեց, բայց զինւորները առանց ոևէ ուշադրութիւն դարձնելու դժբախտի հառաչանքներին, շարունակեցին իրենց դժոխային տանջանքները։

Չնայելով, որ տաճիկ կառավարութիւնը՝ հաւատարիմ իր խաբելու հին սիստէմին՝ աշխատում է հաւատացնել, որ Մակեդոնիայում խաղաղութիւն է տիրում, իրողութիւնը այն է, որ ապստամբ խմբերը դեռ չեն ցրւել, չնայելով, որ կառավարութիւնը որոշել է չհետապնդել ապստամբներին, բազմաթիւ կռիւներ են պատահել զօրքերի և ապստամբ խմբերի միջև։ Կազմակերպւել են շատ մահմէտական խմբեր, որոնց նպատակն է զէնքերը խլել քրիստոնեայ գիւղացիների ձեռքից։ Սարսափելի տանջանքների են ենթարկւում անմեղ գիւղացիները, որպէս զի յանձնեն իրենց զէնքերը, իսկ եթէ չունեն, պարտաւորւում են հրացանի գինը վճարել, որպէս զի այդ հրացաններով սպանւեն հէնց նոյն քրիստոնեաները։ Մեծ է այն գիւղացիների թիւը, որոնք իրենց վերջին շունչն են փչել փայտերի հարւածների տակ։ Շատերը այս տանջանքներից ազատւելու համար ստիպւած են ապաստան գտնել Բուլգարիայում։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Pro Armenia-ի նոյեմբեր 25-ի համարին մէջ Պիէռ Քիառ „Ցարեդարձ" վերնագրով կարևոր յօդւած մը զետեղած է, որ քաղւածօրէն կը բերենք ներքև.

Նոյեմբեր 17-ին Աբդիւլ Համիդի ծննդեան չարագուշակ տարեդարձը տօնելու համար, „Տէթ-բիւպլիքի" հոգաբարձութիւնը ընծաներ եւ շնորհակալութիւններ ուղարկեց պալատը. իսկ Վոսփորի միւս եզերքը՝ Հայտար-փաշայ՝ շոգեկառքի ընկերութիւնն ի յիշատակ փատիշահի փառացը, հոյակապ կոթող մը կանգնել տուաւ։

Բայց ոչ այն ֆրանսացի, գերմանացի եւ ուրիշ հարուստ մեծատուններու նուաստ փաղաքշանքները, ոչ պաշտօնեաներու շնորհաւորութիւնները, միապետներու եւ նախագահներու բարեմաղթութիւնները, ոչ ալ Վոսփորի գիշերւայ դիւթիչ լուսաւորութիւնը՝ չպիտի բաւէին որեւիցէ ուրախութիւն զարթեցնելու կենդանիին զազանաբարոյ եւ խաբեբայ հոգւոյն մէջ։

Աբդիւլ Համիդի համար իրական ուրախութիւն չկայ, եթէ չկարենայ հրճուիլ որեւիցէ ջարդի լուրով։ Եւ ալ իր փափագին հասաւ՝ թէ Հայաստան, թէ Մակեդոնիայ անդադար կը ջարդեն, հակառակ ձմրան։

Արիւնկզակ խենդին համար ի՞նչ կարեւորութիւն ունին բոլոր այն ընծաները, մարմարիոնի վրայ փորագրւած ոսկեզօծ տառերը. ճարպիկ պաշտօնեաները աւելի լաւ կը ճանչնան տիրոջ հաճելի ըլլալու գաղտնիքը։ Քիւրդ Աբդիւլ-Ալին, խումբ մը զինեալներու աջակցութեամբ, երեք օրւան մէջ կողոպտեց եւ քար ու քանդ ըրաւ Անապատ, Կոտանս, Սեւրար, Հազաց, Սիկ, Անէնտշիք եւայլն գիւղերը։ Ահա արժանաւոր եւ Եըլդըզի առանձնակեացին հաճելի աշխատութիւն մը...

Մենք ալ ունինք մեր տարեդարձները. „Պրօ Արմէնիայի" երրորդ տարին է որ կըսկսինք եւ պիտի շարունակենք, առանց ձանձրանալու, այս ձեռնարկութիւնը, որ ապարդիւն չէ եղած։

Նոյնիսկ 1895-1896-ի զարհուրելի ջարդերէն եւ միեւնոյն պատճառով պետութեանց խորհրդարաններու մէջ տեղի ունեցած վիճաբանութիւններէ յետոյ, դարձեալ հայկական խնդիրը բոլոր Եւրոպայի մէջ շատ լաւ ծանօթ չէր եւ այժմս ալ վերջնականապէս չէ։ Հայաստանէն հասած պաշտօնապէս վաւերացւած թղթակցութիւններու միջոցով, քաղաքակիրթ ժողովուրդները յուզւեցան եւ սկսան հոգ տանիլ այն հեռաւոր ցաւերուն, որոնք նոյնիսկ երեւակայութեան սահմանը անցած են։ Եւ ալ սոսկումով կ՚իմանան որ միայն ոճրագործութեան եւ բռնութեան վրայ հիմնւած կայսրութիւն մը պաշտպանւած է իրենց կառավարութիւններու մեղսակցութեամբ։

Ուստի մեր առաջին պարտականութիւնն է միշտ պարզել հայկական տանջանքները եւ առանց յոգնելու ազդարարել պատասխանատու անունները։

Այսպէս շատ մը վաւերացւած լուրերու հրատարակութիւնը յառաջ բերաւ միջազգային այն համակրութեան մեծ շարժումն, որուն հետեւանքն եղաւ Բրիւսէլի հայասէրներուն համաժողովը։ Միթէ այս համակրութիւնը պլատօնական եւ անօգուտ է՞. երբէք։ Մինչեւ անգամ ամենէն աւելի աննպաստաւոր երկիրներուն մէջ, ինչպէս Գերմանիայ, հասարակական կարծիքը փոխւեցաւ, եւ համաժողովէն վերջ նոյնիսկ պաշտօնական թերթերը փոխեցին իրենց խօսելու եղանակը։

Ուրիշ տեղեր ալ հասարակական կարծիքը ազդեց կառավարութիւններու գործունէութեան վրայ։ Օրինակ՝ անցեալ ամառ ֆրանսական հանրապետութեան կողմէ Մուշ յատուկ գործակալ ուղարկւիլը, որ անտարակոյս մեծ ազդեցութիւն մը ունեցաւ Սասունի դէպքերուն վրայ։ Եւ այդ ուշադրութիւնը ուրիշ բանի արդիւնք չէր, բայց եթէ լուրերու ժամանակին իմացւելուն եւ երեսփոխաններու կողմէ նախարարապետի մօտ եղած ջանքերուն։ Ինչպէս որ Բրիւսէլի համաժողովը խնդրած էր՝ նոր հիւպատոսարաններ պիտի հաստատւին ամենէն աւելի վտանգւած տեղերը։ Եւ ատոնց պէտք եղած ծախքերուն համար ալ մասնաւոր բաժին մը յատկացւցած են այս տարւայ կառավարական նոր ծախքերու հաշւեցոյցին մէջ։

Սակայն բոլոր հայ գաւառներուն զարհուրելի վիճակէն յառաջ

եկած ընդարձակ ցաւին համար, այս զգուշութիւնները չնչին եւ առժամանակեայ դարման մը միայն կրնան ըլլալ, որով բնաւ չպիտի դադրինք Բեռլինի 61-րդ յօդուածի գործադրութիւնը խնդրելէ: Հայերը երբոր յիշեալ վաւերացուած յօդուածով իրենց վերապահուած իրաւունքները խնդրեն, երբեք անգործադրելի կամ չափազանցուած պահանջներ ըրած չեն ըլլար: Եւ այս հանգամանքը ոչ մի պատճառ չի յարուցանէր կայսրութեան միւս որեւիցէ ցեղերու կասկածը արթնցնելու, ոչ ալ ստորագրող պետութիւններու ոճրագործ անգործութիւնը արդարացնելու:

Առայժմ մեր, եւրոպացիներուս, կատարելիք դերն է՝ ճանչցնել եղելութիւնը, ցուցնել որ բաւական չէ միայն պարզ մարդասիրական զգուշութիւն մը, եւ թէ նոյնիսկ այն խաղաղութեան համար, որ չեն ուզեր խանգարել, անհրաժեշտ է Բեռլինի դաշնադրութեան գործադրութիւնը: Սակայն հայերը, մանաւանդ իրենց արիւնով եւ կռուով է որ պիտի յաղթանակեն եւ ձեռք բերեն իրենց յատուկ փրկութիւնը: Հայերը պարտաւոր են պաշտպանել եւ օգնել իրենց հայրենակից խմբապետ հերոսներուն, որոնք Սասուն եւ ուրիշ տեղեր սպանող համիդիէններու դէմ կը կռուին:

Բայց անհրաժեշտ է նաեւ հային չվատնել ապարդիւն իր ուժերը: Մեր հայ բարեկամները թերեւս միշտ նպատակայարմար կերպով չգործածեցին իրենց ջանքերը: Մեզ համար մեծ ուրախութիւն մը պիտի ըլլայ գուշակել որ ապագային այլեւս նոյնը մի պիտի տեսնենք ունենայ: Որով[illegible] թոյլ տուր մեզ սոյն մաղթանքը ընել իրենց:

Գալ տարեդարձին, Աբդիւլ Համիդ ալ աւելի պիտի դողայ իր Եըլտըզի եռապատիկ բերդին ետեւէն, եթէ իմանայ որ իր զոհերը ոչ թէ միայն ընդհանուր ատելութեամբ մը միացած են իրեն դէմ, այլ համաձայնած են նաեւ իրենց դահիճը պատժելու եւ զայն անվնաս դարձնելու միջոցներուն համար:

* * *

Պ. Անատոլ Լըռուա Պոլիէօ, անդամ ակադեմիոյ, խօսած է մի ընտիր և կորովի ճառ սօսիալ բարձր ուսմանց ռուս դպրոցին երկրորդ տարեշրջանի բացման առթիւ, ի ներկայութեան բազմաթիւ հանդիսականներու, ուսուցչապետներու և ուսանողներու: Այդ ճառին մէջ գրչի այս մեծ վարպետը բարի կալուստ մաղթած է բոլոր ռուս հպատակներուն, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, և խօսել է վերջիններու՝ լեհացիներու և հրէաներու մասին, չէ մոռցած և մեզի ու այս կերպ արտայայտած է ինքզինքն մեզ հայերուս նկատմամբ.

«Ձեր լայնածաւալ կայսրութեան մէկ ծայրը, Կովկասի հարաւային կողմը, կայ մի տառապող ազգութիւն եւ որ պէտք է մեզ ամենէն սիրելի լինի, որովհետեւ նա տառապած է աւելի քան ոչ մէկը. մարդերու մի ազգ, զոր իր թշնամիներուն ատելութիւնն եւ Եւրոպայի լքումը կը սպառնան ջնջել: Հասկանալի է անշուշտ թէ ես հայերու մասին կը խօսիմ: Ռուսիան, մէկէ աւելի պարագաներու մէջ, յայտնած է անոնց իր բարեկամակցութիւնը, նա արժանիքն է ունեցած Սան Ստեֆանոյի դաշնադրութեան ատեն խորհելու անոնց մասին եւ զանոնք Բեռլինի դաշնադրութեան ժամանակ Եւրոպայի ուշադրութեան յանձնելու [illegible]: Զարգերքն իմեր, նա շնորհած է մահմեդականներուն իր հողին վրայ մի ապաւէն, գուցէ չափազանց անձուկ: Բայց, թէպէտ եւ նա շատ անգամ տարածած է իր պաշտպանութիւնն այս դժբախտ ժողովուրդին վրայ, կարելի՞ է ըսել սակայն թէ Ռուսիան բաւականաչափ բան ըրած է անոր համար: Ռուսիա եւ Ֆրանսա, կատարա՞ծ ենք մենք Արեւելքի այս քրիստոնեաներուն նկատմամբ, քրիստոնեայ մեծ պետութիւններու մեր ամբողջ պարտականութիւնը: Եւ քանի որ Ռուսիան եւ Ֆրանսան համաձայնաբար կը նպատանան, թէ որեւէ[illegible] մէջ մի առաքելութիւն ունին, չպիտի կրնայի՞ն անոնք համաձայնիլ փրկելու համար մնացորդները այս հնչեակ ազգին եւ պահանջելու վերջապէս Բ. Դռնէն Բեռլինի դաշնադրութեան գործադրութիւնը»:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ ստացած է՝

Պ. Բաղդ. (Պերսիայից՝ Յունուարի, սեպտ. ամսին) 15 Ֆր., ՎԱՌՆԱՅԻ Կոմիտէից 50 Ֆր. („Սպարթար" խմբի երեք ամսավճարի փոխարէն 18 լէվ, վիճակահանութենէ մը գոյացած 30, ընդդիմախօս ատախծագործէ 2):

ԵԹՈՎՊԻԱՅԻ հայերի մէջ (Հարար, Աղդիս Աբաբա, Ճիբուդի եւ այլ տեղեր) հանգանակուած „ի նպաստ հայրենիքի մէջ կռւող յեղափոխական խումբերու" 1000 Ֆրանք:

Ընդամէնը 1065 Ֆրանք

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՆ՝

„Պռօշ" խ. 10 ռուբլի, „Բլէջան" եւ „Եռանդ" խմբերի դաշնակից նոր „Մանուկ" խ. 10, դաշնակից „Բլէջան" խ. 30, „Նորընտիր" խ. 15, „Վահէ-Հայկազեան" խ. 5, հանգանակ. թերթ № 170՝ 32 ռ., № 172՝ 40 ռ., Քուռից (աշակերտական խումբ) 115. 28, „Պարոյր" խ. 10, „Հազր-Բաբա" խ. նուիր. յոշ ամս. 16, „Կարմիր Աղբիւր" խ. 10, Շաւարշեանի միջոցաւ 40, Լակլակից 50, ԱՊԱՌԱԺԻՑ 300, ՄՐԳԱՍՏԱՆԻՑ 800 Մանգլ.-ից՝ ներկայացումից 122, Սեւաշերից 5 ռուբլի:

ԱՄԵՐԻԿԱ՝

Լինի Կոմիտէն ստացած է 1901 թւի ընթացքին Արտաւազդ 25 դօլար, Խըեաւ, Հայկ, Կրակ, Քաջբերունի, Առնետ, Գ. Խ. 15-ական, Հրաշ 16, Կ. Գ. 14, Ց. Խ., Ապար, Խ. Ա. 12-ական, Մ. Խ. 11. 25, Ց. Կ. Խ., Մուրակ, Կ. Մ. Լ., Ս. Մ. 10-ական, Ս. Թ., Կ. Կ., Ղ. Կ., Ա. Դ., Մ. Ս., Ա. Ն., Ե. Դ., Ղ. Տ., Պ. Փ. 5-ական, Ց. Մ. 10, Եօթնիակ 3, Մ. Ե., Ասմեցող, Պ. Կ., Ա. Գ., Մ. Թ., Ղ. Մ., Մ. Մ., Վ. Բ., Կ. Կ. 2-ական, Ց. Ե., Հ. Ռ., Խ. Մ., Պ. Պ., Խ. Կ., Ց. Ե., Պ. Պ., Մ. Ա., Ց. Մ., Ռմ, Ե. Ա., Ց. Պ., Խ. Օ., Ա. Պ. մէկ-ական: Ց. Ռ. 75 սէնտ, Ա. Ե. 50 սէնտ, Ռմ, 50 սէնտ, այլ եւ այլք 14. 50: Ընդհանուր գումար 338 դօլար 50 սէնտ:

ՍԱԼՆՈՅ ՁՈՐԻ Կեդր. Կոմիտէն՝

1902 ապրիլի 2-էն մինչեւ օգոստոս 20.—ԱՊԱՀՈՌՆԻՔԷՆ՝ Խնձակունք գիւղի խմբէն 100 դահեկան, Ծերմակ գիւղի խմբէն 20, Մարգ գիւղի խմբէն 40, Աւերակ գիւղի խմբէն 60, Բլրտակ գիւղի խմբէն 100, Ճերմակ գիւղի խմբէն եւս 40, Դարագլուխ գիւղի խմբէն 40, Կարմիր գիւղի խմբէն 40, Տապաններ գիւղի խմբէն 100, Նորաշէն գիւղի հին գանձի հաշւէն 440, Ջրագիւղի խմբէն 40, Արթուն գիւղի խմբէն 60 դահեկան:

ԴՈՒՐԱՆԻ Օվասիս շրջանակի կոմիտէի ձեռքով Անիւծի եւ զինուոր Քեռիի ձեռամբ 57 դահեկան:

Ընդհանուր գումար 1137 դահեկան:

ԲԱԼԿԱՆԵԱՆ Կեդր. Կոմիտէն՝

ՓԻԼԻՊԷԼԻՆ՝ Ռուսհանէ 2 արծաթ լէվ, „Արեւելեան" խ. 11, Շաքէ կանանց ընկ. 75. 40, „Վրէժ" խ. 59, „Պուլկարացի Պետօ" խ. 52, „Արեւելեան" խ. 21, Տ. Ս. Գ. 25, Տ. Հայկակ 30, „Հեթում-Դազիկ խ. 18, Սիմէոն-ծերունի 6, „Հեթում-Դազիկ խ. 25, „Արամեան" խ. 59. 40, օրիորդաց Կարմիր խաչի „Օժանդակ" խ. 72, ՍՕՓԻԱՅԷՆ՝ „Արաբօ" խ. 9. 60, „Սերոբ-Աղբիւր" խ. 35, „Փէդայի" խ. 27, Սերոբ-Աղբիւր 45, Արաբօ 18, ՊՈՒՐԿԱՍԻ Մանաճիւղէն 115, ՍԻԼԻՍՏՐԻԱՅԷՆ՝ Էլլիս եւ Գ. 10, Փիլիպէյի Շաքէ կանանց ընկ. 120, ՔՕՆՍՏԱՆԴԱՅԻ ենթակոմիտէ 200 Ֆր., ՌՈՒՍՃՈՒՔԻ ենթակոմիտէ 200, հանգանակութենէ 500 Ֆրանք: Ընդհանուր գումար 1035 լէվ, 740 Ֆրանք:

ՆԱԽԱՋԱՆԳՍՏԻ Կեդր. Կոմիտէն՝

„Ցրնկատար" խ. 10 ռուբլի, „Տարօնեցի" խմբից Փարհատ, Մուրատ, Սարհատ, Էզրայիլ, Անահիտ, Տարօնեցի, Լենեցի, Հայդուկ, Փիղան, Փարամազ 15 ռուբլի, „Արազած" խմբից Թուրէն, Հրանտ, Զարեհ, Արշամշէն, Ժիրայր, Սուրհանդակ, Կայծակ Աստղիկ, Վարազդատ, Սմբատ 5 ռուբլի:

ՎԻԾԱՊԻ Կեդր. Կոմիտէն՝

„Արծիւ" խ. 95 դահեկան, „Հայրենասէր" խ. 8, „Հայրենիք" խ. 80, Քաւաջ 20, Խոնանք 15, Ճոճս 10, Թաթուլ Դայլ 60: Գումար 288 դահեկան:

Խմբագրութեանս գիծէ Հեռեւեալ Հասցէով՝

Rédaction du „Droschak", Genève (Suisse)